

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ
Ֆիլ. գիտ. բեկնածու

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՑԱՇԱՆՑՆԵՐԸ

(Ստուգաբանական համառատ ակնարկ)¹

Բովանդակություն՝ § 1. Հնդհանուր ծանոթություններ. § 2.-Առ-ի, ոտ-ի, տ-ի հոգնակի բառածանցները և նրանց առութեալը. § 3. Հոգնակի բառածանցները քարթվելական լեզուներում՝ հայերենի համեմատ և վրաց. ջօ-լում-» հախարայամասնիկը. § 4. -Առ-ի, -ոտ-ի, -տ-ի բառածանցների ձևադիմաստային համարժեքները վրացերենում. § 5. -Որ-ոյ հոգնակի բառածանցը՝ համպոր-ոտ-ի հոգնածանցին. § 6.-Որ հոգնածանցի այլոց հետ միացումը, նրա դրափոխությունն ու այլակերպութեալը՝ որ > ր > ռ || չ || չ՝ բայի ձեզ. § 7.-Որ և -ոտ հոգնակին զիլ և կը բառաձևերում. § 8.-Ուի > վի > վ հոգնակին բայի մեջ օրպես կրկնակրպութակերպ՝ հիմնականում երկուսի փոխհարաբերակից՝ ածանց. § 9.-Ք ե-ի-լ հոգնակիներն իրար համազոր բառածանցներ, և -Ա-ի հոգնակին. § 10. Զ > ս հետքիրը ինսենսիվության բառածանց. § 11. Ամ, եւ հան երբեմնի հոգնակիներն այսօք. § 12. Ամփոփում:

§ 1. Բնդիանուր ծանոթություններ. Ն. Մառը իր ժամանակին, ինչպես հայտնի է, հակադրվելով հնդկրոպարանությանը՝ ապացուցում է, որ հայերենը մաքուր հնդկրոպական լեզու չէ. նա, որպես խառը լեզու, բազմաթիվ ընդհանրություններ ունի տեղական լեզուների հետ. Այդ ընդհանրությունները գալիս են հնագույն շրջաններից, այսպես ասած՝ նախա-արիական (հաքեթական) լեզուներից. Շատ ընդհանրություններ հնարավոր չեն պարզել, թե որ լեզվից որին են անցած, օր.՝ հայերենից են քարթվելական լեզուներին անցած, թե, ընդհակառակն, քարթվելական լեզուներից հայերենին. Պարզ ասած՝ դրանք այնպիսի ընդհանրություններ են, որոնք մի կողմից խաչավորված լինելով հայերենի նախա-արիական լեզվաշերտին՝ անցել են արիա-

¹ Զեկուցքած է 1946 թ. դեկտեմբերի 23-ին Նբեանի Մոլոտովի անդամ Գետ. Համալսարանի Ն. Մառի անվան կարինեակ կագմակերպած գիտական սեսիային՝ նվիրված Ն. Մառի ծննդյան 80-կ մահվան 10-ամյակին:

կան հայերենին, և մյուս կողմից՝ խաչավորված լինելով նաև տեղական լեզուներին՝ պահպանված են այսօր, օր՝ քարթվելական լեզուներում։ Այսպիսով, դրանք ոչ թե փոխառություններ են, ինչպես հակված են ուժանք ամեն ինչ փոխառություններով բացատրել, այլ ուղղակի լեզվական ընդհանրություններ ու աղդակցություններ, որ պահպանված են հայոց ու վրաց լեզուներում։ Ինչպես ընդհանուր բառերով ու բառարձատներով, այնպես էլ միենույն ծագում ունեցող մասնիկներով, ածանցներով, հոլովանիշներով և այլն։

Հայոց բազմաթիվ լեզվատարրերի ճիշտ լուսաբանման գաղանիքների բանալին Ն. Մառը տալիս է բոլոր նրանց, ովքեր զբաղվում են լեզվի նոր ուսմունքով, լեզվի նոր պատմությամբ, հայ-վրացագիտությամբ։ Այդ բանալիով միայն հնարավոր է բանալ հայոց լեզվի շատ դադարիքները և թափանցել նրանց խորքերը, տեսնել լեզվի մեջ ձևա-իմաստային այն բազմազան անցումները, ձևա-բովանդակական այն անընդհատ շարժումը, որի ընթացքում հաճախ հոգնակի մասնիկները դադարում են այլևս հոգնակի մասնիկներ լինելուց և իրենց մեջ զարգացնելով երկրորդական հատկանիշ ցույց տվող իմաստը՝ ի վերջո հանգում են իրենց հիմնական-առարկայական իմաստի բացառմանը. առ է ահա լեզվի ստեղծագործական առարերքը, առանց որի գժվար է լեզուն պատկերացնել, առանց որի լեզուն դժվար թե գոյություն ունենաւ։

Մենք այստեղ քննության ենք առնում հիմնականում հայերենի բայածանցները։ Ընդհանրապես հայերեն ասելով՝ մենք հասկանում ենք գրաբարը, միջին հայերենը, արդի բարբառները և հայոց նոր գրական լեզուները՝ արևելյան և արևմտյան։ Սրանց նախատիպները, իրենց հերթին, առանձին լեզուներ են եղել նախահայկական բազմաթիվ լեզուների իրար մոտեցման, խաչավորման ու միավորման ուղիով՝ զարերի ընթացքում, ինչպես հայտնի է, ստացվել են մեր արդի բարբառներն ու գրական հին ու նոր լեզուները։ Սրանք, չնայած իրար մոտեցման, դեռ այսօր էլ իրենց մեջ, այս կամ այն չափով, պահում են մարդկային մտածողության հնագույն գանձեր, լեզվական այն վերաբրուկները, որոնք գրական բառաձեւերում կամ բոլորովին չեն մնացել, կամ էլ, եթե մնացել են, համեմատաբար շատ նվազ չափով (իսկ այդ նվազ չափը սովորաբար ակնբախ չի դարձնում լեզվական այս կամ այն երևոյթը նկատել)։

Ահա թե ինչու, առաջիկա, իմ այս փոքրիկ ու համառուսումնասիրությունը հայոց գրական լեզուների հետ միասին հաշվի է առնում նաև բարբառները¹—այդ երբեմնի նախահայկական առանձին լեզուները:

Իմ այս ուսումնասիրության վերնագրից էլ երևում է, որ քննության ենթակա են հայերենի բայական ածանցները, Սրանք, իրենց հերթին, այսպես կոչված կերպածանցներ են, որոնք ածանցվելով բայածերին առաջ են բերում նրանց մեջ իմաստի տարրեր երանգավորումներ կամ գործողության կատարման կերպերը:

Այլ կերպ ասած, բայի արտահայտած գործողության տարրեր առումները կամ կերպերը հիմնականում դրսեորվում են կերպածանցների. կամ ընդհանրապես բայածանցների միջոցով, որոնց ծագումն ու ստուգաբանությունը, իմ կարծիքով, անմիջականորեն կապված են սերտ կերպով անունների հոգնակի մասնիկների հետ: Այս պատճառով էլ անհրաժեշտ եմ գտնում տաջուց մի փոքրիկ ծանուցում տալ վերջիններիս, այսինքն՝ անունների հոգնակի մասնիկների մասին:

Անունների հոգնակի մասնիկները, այս կամ այն չափով և այս կամ այն կապակցությամբ, լուսաբանված են հայագիտությամբ զրադիող ինչպես երպական, այնպես էլ սովորական և նախասովութական գիտնականների կատարած տարրեր ուսումնասիրությունների մեջ: Հստ այդ ուսումնասիրությունների՝ հայերենը, օր. գրաբարը, բացի հիմնական հոգնակի կազմով - մասնիկից, ունեցել է նաև երկրորդական, ոչ տարածված, տարրեր հոգնակերտ մասնիկներ. գրանցից են, օր., -այ՞ կան-այք, տիկն-այք, իշխան-այք..., -ան և -անմ՝ ձի-ան, իշ-ան... նու-անք, Մարիամ-անք..., -հան և -հանմ՝ գրեան, եպիսկոպոս-եան, զօրադիմ-եան...

¹ Իսկ բարբառներից անհրաժեշտ բառաձեները վկայակոչելիս պլիտոբապես օգտագործում եմ, բայց իր տեղում չեմ նշում, Ս. Ամատոնն և Հ. Ամառյանի բառարանները (Ս. Ամատոննի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912. Հ. Ամառյան, Հայերեն գավառ, բառար. Թիֆլ. 1913 և Ալբանա, բառարանից գավառ, ձեերը), որոնք այդ ձեերի անուպատ աղբյուր են: Այնուհետև սրաշ կտրդի բառաձեռ աեղ-տեղ բերում եմ նաև հետեւալ աշխատություններից՝ 1. Այտըննան, Թննակ. քերակ. աղմարհաբար կամ արդի հայերեն լեզվի. Վիճննա, 1866. 2. Գաղտննան, Եվդոկիոյ հայոց գավառաբարբառը. Վիճննա, 1889. 3. Գարդիելնան, Ակնա գավառաբարբառը և արդի հայերեն լեզուն. Վիճննա, 1912. 4. Հ. Ամառյան՝ ա. Թննութ. Ագուլիսի բարբառի. Նրկան, 1935, թ. Թննութ. Նոր-Զուղայի բարբառի, Երևան, 1940 և այլն, և այլն:

կապձ-եանք, Յովհան-եանք..., -անի՝ աղատ-անի, աթոռ-անի, ավագ-
-անի..., ևար և -եարք՝ վան-եար, վարժ-եար, բան-եար..., իշ-եարք,
քիրդ-եարք..., նեար՝ բարձկ-նեար, նաւկ-նեար, քաղաքկ-նեար...,
-որայ և -որայք՝ կալ-որայ, վան-որայ... դաշտ-որայք..., -որեայ՝
արտ-որեայ, վան-որեայ..., -ոտի և -տի՝ ոսկը-ոտի, փոր-ոտի...
մանկ-ոտի, ծակ-ոտի...

Մըանց պետք է ավելացնել միջին հայերենից վաղուց ար-
դեն հայոնի հղու նաև նետեյալ հոգնակի մասնիկները՝ -նի՝
Բանջր-նի, պաճոնի, հայրապետ-նի..., -ուի՝ աչ-ուի, ոտ-ուի, դո-
-ուի..., -ստան՝ տեղե-ստան, այդի-ստան, ծառա-ստան..., եր՝ արտ-
-եր, աման-եր, բժշկ-եր..., այլ նաև մեր աշխարհաբարք՝ -ներ
հոգնակին, օր՝ սեղան-ներ, երկը-ներ, քաղաք-ներ... և այլն¹

Հիշյալ հոգնակի մասնիկները, մանավանդ ժողովրդական
լեզուներում, հաճախ միանում են իրար տարբեր հաջորդակա-
նությամբ ու քանակով և ստեղծում բաղադրյալ հոգնակիներ,
որոնցից մի քանիսը վերեւում նշված են արդեն։ Այսպիսով սրանց

¹ Այտօնյանը խոսում է իր «Բնն. քերակ. աշխարհաբար կամ արդի
հայերեն լեզվի» ուսումնակրության «Նախաշավալից» մասում (էջ 79—80)՝ եր,
-նի, -նի > -նի, -ան || -ան, -ափ, -ոլ հոգնակի մասնիկների մասին և շատ ուշա-
գրավ է, որ նու հիշյալ մասնիկները մեր մատենագրության սկզբանը հնա-
ժամանակից է համարում։

Ն. Մարլ իր զրաբացի քերականության մեջ (H. Mapp, Грамматика
древнеармянского языка, Санкт-Петербург, 1903, էջ 95—99) խոսում է
տանձնառակե հոգնակի կազմությունների մասին, որոնցից՝ 1. -ական՝ զու-
սան-տկան զուսաններ, զրաստ-ական «զրաստներ», զաւը-տկան զգնվածներ,
2. -ամ՝ ձի-ան, իշ-ան, 3. -անի՝ աղատ-անի, կան-անի, 4. -նան՝ խորդ-եան,
նախարար-եան, զաւըպլի-եան, թղթ-եան, ընթր-եան, իշ-եան, 5. -եար || -նեար՝
աւը-եար, խոզ-եար, գան-եար, իշ-եար, բան-եար, ընթր-եար, բարձկ-նեար,
նաւկ-նեար, 6. -իկ, 7. -ուսան՝ արտ-որեայ, գան-որեայ, 8. տի՝ մանկ-ոտի,
ծակ-ոտի

Կաշառ իր միջին հայերենի գրքում (Josef Karst, Historische gram-
matik des kilikisch-armenischen, Strassburg, 1801, էջ 169—215) ցույց է տա-
լիս միջին հայերենի հետեյալ հոգնակները¹. Եր, օր՝ աղք-եր, ակն-եր,
աշ-եր, գեղ-եր... աման-եր, բժշկ-եր, կտրճ-եր, կերակր-եր, վաճակն-եր..., 2. -նի,
օր՝ ակւայ-նի, ածվ-նի, այտուց-նի, բանջր-նի, գոմշ-նի, նամիկ-նի..., 3. -ովի ||
-ուի || -ուի, օր՝ աչ-վի, ձեռ-վի, ոտ-վի, միջ-վի և մեծեցներ, իբ-վի, մատ-վի, տն-
-վի, շն-վի, ալիկ՝ ձեռ-ուը + ներ < *ձեռ-ուի + ներ, ոտ-ուը + ներ < *ոտ-ուի +
+ ներ, աչ-ուը + ներ < *աչ-ուի + ներ, ծնկ-ուը + ներ, < *ծնկ-ուի + ներ, մատ-
-ուը + ներ < *մատ-ուի + ներ..., 4. -տի || -դտի, օր՝ մանկ-ոտի, ծակ-ոտի, երկ-
-ոտի և բլուսուներ, այրի-ոտի < *այրիկ-ոտի, կնկ-ոտի || կնկ-ոտի... քուր-վաի, տիր-
-վաի..., 5. -ան, օր՝ ձի-ան || ձի-անը, իշ-ան || իշ-անը, զորե-ան..., 6. -ստան,
օր՝ հայերենե-ստան, զնե-ստան «շինքներ», աեղե-ստան, խմելե-ստան, ըմ-

թիվն է՛լ ավելի մեծանում է և պարզ հոգնակի մասնիկների հետ ի մի վերջրած հասնում մի քանի տասնյակի¹

Բաղադրյալ հոգնակի մասնիկներից, օր., մենք կարող ենք՝ բերել ֆողովողական լիզուններից՝ բարբառներից հետեւալները, որոնք կարող են կրկնվել տարրեր բարբառների, ինչպես նաև միջին հայերների մեջ՝ 1. -ուրսիֆ=ուը+տի+ք, օր.՝ Եվդոկիո հայոց բարբառի մեջ՝ շն-ուը+տի+ք, տեր-ուը+տի+ք, տալ-ուը+տի+ք..., 2. -ուրսաֆ=ուը+տ+ա+ք<*-ուը+տ+այ+ք, օր.՝ Ակնա բարբ.՝ նիր-ուը+տ+ա+ք, տալ-ուը+տ+ա+ք, հարս-ուը+տ+ա+ք..., 3. -ութիր=ուը+ն+եր, օր.՝ Եվդոկիո բարբ.՝ ձեռ-ուը+ն+եր, մատ-ուը+ն+եր, ուս-ուը+ն+եր..., 4. -ուանիֆ=ուը+տ+ան+ք, օր.՝ պղոսահայ բարբ.՝ տեղ-ոււ+ան+ք, զեղ-ոււ+ան+ք, հող-ոււ+ան+ք..., 5. -ուանֆ<*-ա+այ+ք² ռուանիֆ=տ+ան+ք, օր.՝ Ակնա բարբ.՝ Պոլս. բարբ. աղբբ-տ+ա+ք և եղբայրներ», տագեր-տ+ա+ք... կտոր-տ+ան+ք, փշր-տ+ան+ք, ոսկո-տ+ան+ք..., 6. -ուրսաֆ¹=ուը+տ+ա+ք <*-ուը+տ+այ+ք, ²օր.՝ Ակնա բարբ.՝ տալ-ուը+տ+ա+ք, նիր-ուը+տ+ա+ք..., 7. -ատիփ=ատի+ք, օր.՝ Ագուչիսի բարբ.՝ պղոսվ-ատի+ք և պառավներ, ըսկըռ-ատի+ք և ոսկորներ, դընըկ-ատի+ք և գանակներ, ինչպես օր.՝ արմ-

պելե-ստան գիտելիք-ըմպելիքներ..., 7. -ի, օր.՝ աանեցի-ք, ըրիստոնէ-ք, պոխրէ-ք, իշանան-այ+ք, պարոն-այ+ք, սուլան-այ+ք, աղախն-այ+ք, տիլն-այ+ք, այլն՝ բարեկամ-ա-ք < * բարեկամ-այ+ք, մեղափոր-ա+ք < * մեղափոր-այ+ք, փոխանորդ-ա+ք < * փոխանորդ-այ+ք..., լնիկը-տ-այ+ք..., զեղեր-այ+ք || զեղ-ը-անք..., վան-եր+այ+ք..., զեղ-օը-է+ք < * զեղօը-եայ+ք, արտ-որ+այ+ք || արտ-որ-եայ+ք, պատճոնի+ք..., զեղ-եր+ք, ճիտ-եր+ք, մարդ-իկ+ք || մարդ-իկ...

1 Այս մասնիկների մատին Ա. Դարիբյանը մի փոքրիկ ստումասիրություն ունի՝ «Հայերներ» հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը վերնագրով, տպված 1934. Երևան Ն 1 Տեղեկագրութ, էջ 87—104. Կույշը նաև նրա հայոց լեզվի պատմ. ուսումն. ներածություն զբարել մեջ 1937, Երևան, էջ 95—105, որտեղ ի մի են բերված մյուս զիտնականների ուսումնասիրություններից արդեն հայտնի դարձած վերոհիշյալ հոգնակի մասնիկները, որոնց ավելացրել է, այսպիս ասած, երբեմնի հոգնակի մասնիկները, որոնց ավելացրել է, այսպիս ասած, երբեմնի հոգնակի մասնիկները, օր՝ հեն, հերի, ունիթ..., և այլն, որոնք այժմ արդեն բառաստղծական անձնանիւ են զարձել (հոգնակի զաղափարն արտահայտում են միայն ուրիշ հոգնակի մասնիկների օգնությամբ):

2 Ան > այ երբեմնի հոգնակի կամ հայտքական մասնիկ-երկրաբառի ժաղ. պարզացումից, իմ կարծիքով, պետք է ստացված լինի ա, որ հանդեմ է եկած, օր., ժող., ուը+տ+ա+ք<*-ուը+տ+այ+ք, -տ+ա+ք<*-տ+այ+ք, -ուր+տ+ա+ք<*-ուը+տ+այ+ք և այլն՝ բաղադրյալ հոգնակի մասնիկների մեջ:

-ատի-ք..., 8. -արատիք =ար+ատի+ք > ըր+ատի+ք, օր.¹
 Ագուլ. բարբ.² ճըղն-ըր-ատի+ք «ճյուղեր», կըխել-ըր+ատի+ք
 «կողքեր», թըղ-ըր+ատի+ք «թաղեր»..., 9. -քատիք =ք+ատի+
 +ք || -արքատիք = ար+ք+ատի+ք > ըր+ք+ատի+ք, օր.³
 Ագուլ. բարբ.⁴ ըշիւր-ք+ատի+ք «աշխարհներ», գըտըն-ք+ատի+
 +ք «գետիններ», զըղ-ըր+ք+ատի+ք «զյուղեր»..., 10. -քանի=
 =ք+անի || -քանիք = ք+անի+ք, օր.⁵ Նոր-Զուղայի բարբ.⁶
 աթոռ-ք+անի, գուլքէ-ք+անի || գուլքէ-ք+անի+ք, պատկեր-ք+
 +անի..., 11. -անիք=անի+ք, օր.⁷ Ագուլ. բարբ.⁸ պըոզվ-անի+ք,
 ջըղըց-անի+ք, կն+անի+ք..., 12. -նիք=նի+ք, օր.⁹ Նոր-Զուղ.
 բարբ.¹⁰ ոսկի-նի+ք, ծախկ-նի+ք «ծաղիկներ», եղնդ-նի+ք
 «եղունդներ», 13. -երիք=եր+ք, օր.¹¹ Նոր-Զուղ. բարբ.¹² տղ-եր+ք,
 ախչկ-եր+ք, ճիսկ-եր+ք... զեղ-եր+ք, օր. եր+ք=սհի կնոջ վեր-
 ջին օրերը» Ակնա բարբ., 14. -քնիք=ք+ն+եր, օր.¹³ Նոր-Զուղ.
 բարբ.¹⁴ պատկեր-ք+ն+եր, ճամրէ-ք+ն+եր, ոսկը-ք+ն+եր «ոս-
 կիներ»..., 15. -արիք=ար+ք, օր.¹⁵ Ագուլ. բարբ.¹⁶ խասկ-ար+ք
 «խոսքեր», ըրիւ-ար+ք «երեխաներ», տղ-ար+ք «տղաներ»...,
 16. -քանիք=ք+ան+ք, օր., եվդոկիո բարբ.¹⁷ զեղ-ք+ան+ք, զեղ-
 -ք+ան+ք, տիղ-ք+ան+ք.... 17. -արանիք=ար+անի+ք > ըր+
 +անի+ք, օր.¹⁸ Ագուլ. բարբ.¹⁹ կըփ-ըր+անի+ք «կովեր», տըղ-ըր+
 +անի+ք «տեղեր», թըղ-ըր+անի+ք «թաղեր»..., 18. -արենիք=ար+
 +են+ք, օր.²⁰ Նոր-Զուղ. բարբ.²¹ տեղ-ար+են+ք, կողմ-ար+են+
 +ք, զեղ-ար+են+ք..., 19. -ենիք=են+ք՝ ժամկոչ-են+ք, դրիզոր-
 -են+ք, զոքնչ-են+ք..., 20. -արոնիք=ար+ուն+ք, օր.²² Նոր-
 -Զուղ. բարբ.²³ սերմ-ար+ուն+ք, զեղ-ար+ուն+ք, սըր-ար+ուն+
 +ք..., 21. -ունաք=ուն+ա+ք<^{*}ուն+այ+ք, օր.²⁴ Ակնա բարբ.²⁵
 ժեծ-ուն+ա+ք, սըր-ուն+ա+ք..., 22. -երանի=եր+անի, օր.²⁶
 Նոր-Զուղ. բարբ.²⁷ շոր-եր+անի, տեղ-եր+անի, փոր-եր+անի...,
 ինչպիս նաև՝ -երայիք=եր+այ+ք՝ զեղ-եր+այ+ք, զեղ-եր+այ+
 +ք..., -որիք=որ+է+ք<^{*}որ+այ+ք՝ զեղ-որ+է+ք... և այլն, և
 այլն¹

Այս բոլոր հոգնակի մասնիկները՝ պարզ թե բաղադրյալ, որ
 վերինում հիշատակեցի, այս կամ այն չափով ուսումնասիրված լի-

¹ Վերոհիշյալ բաղադրյալ հոգնակի մասնիկներով բառաձեռքը ընթաց՝
 եմ 1. Դավաննեան, ծվդոկիոյ հայոց գավառաբարբառ (Վիեննա, 1899), 2. Դար-
 բիենան, Ակնայ գավառաբարբառ... (Վիեննա, 1912), 3. Անայան, Քննություն
 Ագուլիսի բարբառի (Երևան, 1935) և Քննություն Նոր-Զուղայի բարբառի
 (Երևան, 1960) աշխատություններից:

նելով տարբեր հայագետների, կողմից, վերաբերվել են միայն ընդհանրապես անուններին, մտածափրապես զոյական անուններին:

Իսկ տարբեր բայաձևներում գրսեռբվող ածանցներից, սահայն, մինչև այս իմ ուսումնասիրությունը, հայտնի էին միայն որոշ ածանցներ, որոնք ըստ խմառափ սաստկական կամ բազմապատկական ածանցներ էին կոչվում:

Իսկ թե որոնդից էին գտիս սրանք և ծագումով ինչ էին, մասնագիտական գրականությունից այս մասին մեղ ոչինչ հայտնի չեր:

Այս ուղղությամբ տարած աշխատանքը, սակայն, պարզեց այն ընդհանուր թերթը, որոնցով բայաձանցները, ըստ իս, անմիջականորեն կապվում են սերտ կերպով անունների հոգնակի մասնիկների հետ և հանդիսանում են նրանց հետագա ձևակիմաստային այլակերպումները:

Հարց է ծագում այստեղ, թե մեղ հետաքրքրող ածանցները, որոնք հանդիս են գալիս բայաձևների մեջ, ինչպես կարող էին անունների հոգնակի մասնիկներից ծագել:

Գետք է ենթադրել, որ սկզբնական շրջանում մարդկային մտածողությունը առարկայական կամ կոնկրետ լինելով՝ մտածողության առանձին միավորները կամ բառագաղափարները պետք է ցույց տային միաժամանակ թե առորկա և թե գործողություն։ Այդ սկզբնական առարկա և գործողություն ցույց ավող միկնույն բառագաղափարները ձևով չպետք է տարբերվեին իրարից, այլ կերպ ասած՝ այս կամ այն բառաձևը, նախ և առաջ, պետք է նշանակեր մի կոնկրետ առարկա և ապա, երկրորդաբար, միաժամանակ այդ առարկայի հետ կապված գործողություն։ Դիցուք թե՛ եղել են պատառ և պատառ-ուի բառաձևերը՝ առաջինը՝ «մեկ», իսկ երկրորդը՝ «մեկից ավելի» շատ պատառ» նշանակությամբ։ Մրանք՝ իրարից թվով միայն տարբերվող այս երկու բառաձևերը՝ պատառ և պատառ-ուի՝ նախապես պետք է գողափար տային կոնկրետ տուրքայի կամ առարկաների մասին և ապա, երկրորդաբար, այդ առարկայի կամ առարկաների հետ կապված գործողության մասին։ Հետագայում, որոշ շրջանում, հիշյալ՝ պատառ և պատառ-ուի՝ բառաձևերից, որ սկզբում արտա-

¹ Ոչ միայն հոգնակի մտանիկների, այլև անվան բոլոր տեսակի մասնիկների հետ, որոնք անուններից, ըստ իս, անցել են բայերին՝ վերջիններիս ձևավորման պրոցեսում։

հայտել են միայն իրենց հիմնական՝ առարկայի կամ առարկաների՝ դադափարը, այդ նույն առարկայի կամ առարկաների հետ կապված գործողության գաղափարն արտահայտելու համար արդեն, բայց վերջավորությունների առաջացման հետ միասին, պետք է, որ առաջանային նոր բառաձեռք, ինչպես, օրինակ, նույն այդ պատառ ձեր՝ պատառ-եմ, իսկ պատառ-ոտի ձեր՝ պատառ-ոտ-եմ բայտաձեռք:

Այս ուղիղով, ինչպես կտեսնենք, անցել ու ձեավորվել են հայերենի բայտաձեռքն ընդհանրապես և սրանցից մեզ հետաքրքրող ածանցավոր բայտաձեռքը մասնավորապես:

Ուրեմն, եթե այս այսպես է, պարզ է, որ բայերի մեջ արտահայտվող ածանցների ծագման աղբյուրները կամ նրանց նախատիպերը պետք է ընդունել անունների երբեմնի մասնիկները, որնք (վերջիններս), ինչպես սկզբում էլ նշեցի, այս կամ այն չափով ուսումնասիրված են: Դրանք ըստ կազմության պարզ կամ բաղադրյալ և ըստ իմաստի հավաքական կամ հոգնակի մասնիկներ են:

Վերեւում բերված, մի կողմից՝ պատառ և պատառ-ոտի և մյուս կողմից՝ պատառ-ել և պատառ-ոտ-ել բառաձեռք առբերվում են իրարից, նախ և առաջ, նրանով, որ առաջին երկուսը՝ պատառ և պատառ-ոտի՝ ցույց են տալիս առարկա կամ առարկաներ, իսկ մյուս երկուսը՝ պատառ-ել և պատառ-ոտ-ել՝ այդ նույն առարկայի կամ առարկաների հետ կապված գործողություն: Սրանց երկրորդ հիմնական տարրերությունն այն է, որ երկու զույգի առաջին բառաձեռքը՝ պատառ և պատպ-ել ցույց են տալիս մի առարկա կամ այդ առարկայի հետ կապված գործողություն, իսկ մյուս երկուսը՝ պատառ-ոտի և պատառ-ոտ-ել՝ ցույց են տալիս ոչ թե մեկ, այլ մեկից ավելի առարկա և այդ առարկաների հետ կապված գործողություն:

Այս վերջին տարրերությունը, ինչպես տեսնում ենք, առարկայի կամ այդ առարկայի հետ կապված գործողության գաղափարի, այսպես ասած, ժանակական տարրերություն է, այսինքն՝ առարկան, կամ առարկա, որի հետ կապված է՝ գործողությունը, մեկ է թե մեկից ավելի՝ շատ, բազմակի:

Այս տարրերությունը նրանց մեջ, ինչպես նկատելի է նաև վերևի օրինակներից, դնում է զուգորդ ձեերի ձեա-իմաստային տարրերակը, այն է՝ անվան մեջ -ոտի մասնիկը, իսկ այդ անու-

նից կազմված բայի մեջ արդեն, իմ կարծիքով, նրանից ծագած -ու հաջունային փոփոխակը:

Վեցորենիշյալ բայաձեռի նմանությամբ, ինչպես կարծում եմ, կազմվել են նաև մյուս բոլոր ածանցավոր բայաձեռը, որ կտևնենք այտեղ, հաջորդ հառվածներում, ըստ հնարավորին բազմազան օրինակներով:

§ 2. Ատ-ի, ոտ-ի, տ-ի հոգմակի բառածանցները և նրանց առումները. Օր. «գր-եմ» բայի մեջ «գր-» բայարմատի և «եմ» բայավերջավորության միջն ոչ մի ածանց չկա: Սա, ինչպես հայտնի է, պարզ բայաձեւ է: Վերցնենք նույն բայի դերայական ձևերից մեկն ու մեկը, օր., «գր-ում (եմ)»: Այստեղ էլ «գր-» բայարմատի և «ում» դերայական վերջավորության միջն ածանց չկա:

Բայց, իհարկե, ինչպես մյուս բոլոր բայաձեռում, այս երկու դեպքում էլ, արմատից անմիջապես հետո, կարող էր որևէ ածանց լինել օր., -ու ածանցը, և նույն «գր-եմ», «գր-ում եմ» պարզ՝ անածանց բայաձեռի կողքին կունենայինք «գր-ոտ-եմ», «գր-ոտ-ում եմ» ածանցավոր բայաձեռը:

Սրանց նման «կտր-ել» բայաձերից՝ -ու կամ -ատ ածանցով՝ կունենայինք՝ կտր-տ-եմ կամ՝ կտր-ատ-եմ, կտր-տ-ում եմ կամ՝ կտր-ատ-ում եմ... և այլն:

Այստեղ՝ գր-ոտ-ել, կտր-տ-ել կամ կտր-ատ-ել բայաձեռի մեջ՝ -ու, -ու կամ -ատ ածանցները, այսպես կոչված, սաստկական (իտերատիվ) կերպ՝ սապեկտ արտահայտող ածանցներ են:

Բայց խոսքի մասնաբարդն է ու դժվարին: Նա իր մեջ պարունակում է քերականական բազմաթիվ ու բազմատեսակ կատեգորիաներ՝ արտահայտված տարբեր ձևույթներով՝ ածանցներով: Հստ երեսութին, նոր ձևույթների առկայությունը կամ «ես» դերանվան համազորը բայի մեջ՝ առաջին դեմքի եղակի թվի համար՝ «-մ» ձևույթն է, այսինքն՝ (ես) գր-ե-մ, գր-ում-ե-մ...

1 Առաջին դեմքի եղակի բայավերջավորությունը՝ «-մ» (գր-ե-մ) և հագն. բայավերջ, «-մ» > «մ» (գր-ե-մ), ըստ երկույթին, երբեմի անձն. դերանվան մասցորդներն են: Հոգն. առաջին դեմքի դերանվան նախահակը՝ մե՞ > մենք՝ ածանց «-մ»-ի, որը հոգնակի մասնիկն է, կիմեր՝ *մե=լրց. Ցյ մե շես: Ունենք եղակի, օր. գր-ե-մ, որի վերջին՝ 1 դեմքի ու թվի նշանը՝ «մ»-ն նույն ենթադրելիք *մ դերանվանը («ես»-ի համապարը) պետք է լինի՝ վերջին «ե» հնչյու-

սըանց հոգնակին՝ մենք¹ գերանվան համազորն է -մ>-ն (այսինքն՝ եղակի -մ>-ն-ին ավելանալով հոգն. քն)՝ մենք զրեմ, պրում ե-նք... և այլն:

Այսպիսով, բայի գեմքի ու թվի քերականական կոտեղորիաներն արտահայտվում են նրա՝ բայի վերջավորություններով: Մեզ հետաքրքրողը, սակայն, այստեղ առայժմ -ատ, -ոտ, -ու բայտծանցներն են, որոնք, ինչպես վերսկի օրինակներից է երեսը, անմիջապես բայարմատներին են ածանցվում և որոշ կարգի փոփոխություններ առաջ բերում նրա մեջ:

Թե ծագումով ինչ են այդ ածանցները, ինչ էր նրանց հիմնական պաշտոնն առևասարակ և ինչ փոփոխություններ են առաջ բերում նրանք բայի մեջ, այդ մենք շուտով կտեսնենք:

Այսօրվա տրեկոյան զրական հայերենի հոգնակերտ ձևույթներն են հիմնականում -եր և -ներ <*սի+եր: Օր., մեկից ավելին ծառ և սեղան կլինեն՝ ծառ-եր, սեղան-ներ: Սրանք գրաբարում, որի հոգնակի սովորական մասնիկը «ք»-ն էր, կլինեն՝ ծառ-է, սեղան-է: Բացի այս հոգնակի սովորական կազմությունից, գրաբարում, այս կամ այն չափով, դործ են ածվել նաև հոգնակի ուրիշ բառամասնիկներ, որոնցից, օր., կարող ենք վեցնել՝ -ոտի, -տի և այլն: Ուրեմն, ուկր և մանուկն ըառերի հոգնակին եղել է ինչպես ուկեր-է և մանկուն-է, այնպես էլ ուկր-ոտի և մանկ-տի: Կամ էլ նույն հոգնակի մասնիկներով այլ կարգի բառաձենք՝ սին-սթ-ոտի, հին-հեն-ոտի, ցունց-ցնց-ոտի, օտար-օտար-ոտի, չիք-չք-ոտի, ծակ-ծակ-տի, բոլոր-բոլոր-տի(ք)... և այլն:

Ինչպես երեսում է, գրաբարի հոգնակի մասնիկի կողք-կողքի երբեմն գործ են ածվել ու գեռ այսօր էլ գործ են ածվում, այսպես ասած, նրա համազորները՝ -ոտի, -տի մասնիկները, երբեմն էլ երկուսը միասին՝ բաղադրյալ՝ -ոտի+է, -տի+է ձե-

նի կորուսող՝ մե > մ փոխնցումով՝ բայի հիմքին ավելացած (գր-ե+մ), իսկ հազն. գր-ե-նի բայի ռնք < մք վերջավորությունը մեր գերանդան սղված՝ և հնչունը կորցրած ձեզ պետք է լինի՝ մե > մք փոխնցված՝ բայի հիմքին ավելացած (գր-ե+մք > գր-ե+նի):

1 Մենք գերանվան նախախպն է՝ մեք, որից վերջին «ք» հոգնակին անշտակուլ կմնա՞մն (ըստ երեսութիւն ևս գերանվան երբեմնի համազորը), ոք գեռ այսօր էլ իմ կարծիքով, վրացերենում պահպանված է նույն ձեռով Ց մէ ՇԽՆ գերանունը, սա ժողովը. լեզվում դարձել է Ց-Ց-Ց ՄԵ-Ց-Ա, ՑՑՑ-Ց ՇԽՆ-Ց ՇԽՆ-Ց գերանվան անլոգիայով, նմանությամբ գրք. մեք > աշխ. մեք:

վով. եղել է, ուրեմն, փոր—փոր-ք, բայց նաև՝ փոր-ստի. ոսկր—ոսկեր-ք, բայց նաև՝ ոսկր-ստի, ծակ—ծակ-ք, բայց նաև՝ ծակ-ստի, մանուկն—մանկուն-ք, բայց նաև՝ մանկ-ստի.... Այս ոտի, -տի մասնիկները, ինչպես տեմնում ենք, զբվելով գոյականի կամ տծականի վրա՝ նրա շատը, հոգնակին կամ հավաքականն են ցույց տալիս:

Մի խոսքավ, սրանք հոգնակիության կամ երբեմնի հավաքականության այնպիսի մասնիկներ են, ինչպես, օր., գրաբարի համար հիմնականում եղել է «ք», իսկ նար գրական հայերենի համար -եր կամ -ներ է:

Հոգնակի -ներ մասնիկը ըստ կաղմության բարդ է, որը, ինչպես հայտնի է, կազմված է՝ մի+եր հոգնակի պարզ մասնիկներից:

Առաջին -նի մասնիկի «ի»-ն թուլանալով ընկել է՝ շնորհիվ հողորդ, ձայնավորով սկսվող, -եր հոգնակի մասնիկի բաղադրման, այսպես՝ նի+եր > *նյեր > ներ փոխանցումով:¹ Այս ձևով էլ -ստի, -ոտի, -տի մասնիկների վերջին «ի» ձայնավորը (եթե, իհարկե, մասնիկները այս ձևով եղած լինեին) թուլանալով կընկներ՝ շնորհիվ նրանց հաջորդող որևէ ձայնավորով սկսվող ածանցի: Օրինակ՝ բարբառներում ունենք «գոմեշ» բառի հոգնակին՝ գոմշ-տանի < *գոմշ-տի+ան+է ձեից, «կնիկ» բառից՝ կնկ-տեր < *կնկ-տի+եր, այլև «կին» բառից՝ կն-քտիք, որտեղ «տի» մասնիկը լրիվ պահպանված է, քանի որ նրան ոչ թե ձայնավորով սկսվող, այլ բաղաձայն «ք» մասնիկն է հաջորդում՝ հակառակ առաջին օրինակների... և այլն:

Այսպես կլինեն, օրինակ, ծակ-տի կամ ծակ-ստի հոգնակիները, եթե սրանց ավելացնենք, զիցուք, ձայնավորով սկսվող անորոշ դերբայի ել վերջավորությունը՝ *ծակ-տի-ել կամ *ծակ-ոտի-ել: Սրանք ևս՝ -նի+եր > ներ փոխանցման ձևով կարող են միաձուլվել, այսպես՝ *ծակտիել > *ծակտյել > ծակտել կամ *ծակոտիել > *ծակոտյել > ծակոտել, որ նշանակում է «շատ ծակեր բանալ», ինչպես, օր՝ ծակտի=շատ ծակեր», եթե, իհարկե, նորից եմ շեշտում, ծակ-տի կամ ծակ-ոտի ձեւերից առաջացած լինեն «ծակ-տ-ել» կամ «ծակ-ոտ-ել» բայաձեւերը:

Բայց, իհարկե, դժվար է պնդել, «ծակ-տ-ել» կամ «ծակ-ոտ-

¹ Այսպես չե, սակայն, սրանց հակառակ դասավորության ժամանակ, այսինքն՝ երբ -եր մասնիկը նախորդում է -նի մասնիկին, օր՝ աչ-եր+նի-ս, ոտ-եր+նի-ս, մազ-եր+նի-ս... և առ հակառավի է:

«Ել» բայաձեռը «ծակ-տի» կամ «ծակ-ոսի» ձևերից են առաջացել թե հենց ուղղակի երբեմնի *ծակ-ուտ կամ *ծակ-ոտ ավելի հին հավաքական անուններից, որոնցից արդեն, հավանաբար, մէ կողմից «ի» ածանցի բաղադրմամբ (հմմտ. խնձոր-ի=«խնձոր-ի+ան+ի>*խնձոր-ե+ան+ի>խնձոր-են+ի») կազմվել են *ծակ-ուտ+ի>ծակ-տ+ի կամ *ծակ-ոտ+ի հավաքական հետագա ձեզերը և մյուս կողմից՝ օր. «Ել» բայավերջավորության բաղադրմամբ էլ՝ *ծակ-ուտ-ել>ծակ-տ-ել կամ ծակ-ոտ-ել բայաձեռը նույն հավաքական նշանակությամբ:

Այսպես թե այնպես, -ատ-ի, -ու-ի, -տ-ի մասնիկավոր որոշ անուններից սկզբում, իմ կարծիքով, ձևավորվելով նույնամասնիկ և նույնիմաստ որոշ բայաձեռը, այնուհետև, սրանց անալոգիայով, կազմվել են, անշուշտ, նաև մյուս նման բայաձեռը...

Այսպես օր՝ կնճռ-ոտ կամ կնճռ-ոսի=«շատ կնճիռներ» նշանակող բառաձեռից ձևավորվել է՝ կնճռ-ոտ-ել=«շատ կնճիռներ հավաքել» բայաձեռը. սրա նման նաև՝ *թաց-ոտ || *թաց-ոտի բառաձեռից՝ թաց-ոտ-ել *թրջ-ոտի բառաձեռից՝ թրջ-ոտ-ել, *հնձ-ոտ || *հնձ-ոտի բառաձեռից՝ հնձ-ոտ-ել, մը-ոտ || *մը-ոտի բառաձեռից՝ մը-ոտ-ել... կամ էլ՝ *բեկ-ուտ || *բեկ-տի՝ բեկ-տ-ել=«չորս կողմից կորտել» նշանակությամբ, *կըճ-ուտ || *կըճ-տի՝ կըճ-տ-ել =«առամենը կըճացնել» նշանակությամբ, *ձգ-ոտ || *ձգ-ոտի ձգ-տ-ել=«ձիգ-ձիգ քաշել, երկարացնել» նշանակությամբ... Այլէ՝ *թղթ-ատ || *թղթ-ատի՝ թղթ-ատ-ել=«գրքի թղթերն իրար հետեւից ըրջել» նշանակությամբ, *խոճ-ատ || *խոճ-ատի՝ խոճ-ատ-ել, բայց նաև՝ խած-տ-ել=«խածխել», *թը-ատ || *թը-ատի՝ թը-ատ-ել=«թըով կտրտել» նշանակությամբ, *խղը-ատ || *խղը-ատի՝ խղը-ատ-ել=«շարաչար խղել, կտրտել, ճեղքուտել» նշանակությամբ, *լիղ-ատ || *լիղ-ատի՝ լիղ-ատ-ել, բայց նաև՝ լիղ-ոտ-ել «շատ լիղել» նշանակությամբ, *փշը-ատ || *փշը-ատի՝ փշը-ատ-ել, բայց

¹ Այս առ || ատի կամ տ || տի երբեմնի հավաքական մասնիկը շղեաք է շիռթել «հատ» բառարմատից առաջացած առ>աբ կամ>ս նույնաձեւ, բայց այլ իմաստ ածանցի հետ, օր.՝ խոփ-ատ-ել >խոփ-ար-ել կամ՝ խոփ-ս-ել բայտձեկ մեջ ։ Եխոփ-հատ-ել» ձեկից ստացված շնորհը վարելիս խոփով լիկանի ոոց մնասել-վիրավորելը, այլէ՝ զիթ-ատ-ել<՝ զիթ-հատ-ել, դուն-ատ-ել<՝ զուն-հատ-ել, հոր-ատ-ել<՝ հոր-հատ-ել, պոչ-ատ<՝ պոչ-ատ-իաս, կտավ-ատ<՝ կտավ-ատ-իաս... և այլն:

նաև՝ փշր-տ-ել, *խանձ-տու || *խանձ-տու-ել, բայց նաև՝
խանձ-ոտ-ել... և այլն:¹

Աւելին, այս բոլոր դեպքերում էլ, ինչպես տեսնում ենք,
շատի գաղափար կա, օր՝ ծակ=ըմի ծակ», իսկ ծակ-տի կամ
*ծակ-ոտի=շատ ծակեր» և սրանցից՝ ծակ-տ-ել կամ ծակ-ոտ-ել
=շատ ծակեր բանալը. կնճիռ=ըմի կնճիռո, *կնճռ-ոտի=շատ
կնճիռներ», իսկ կնճռ-ոտ-ել=շատ կնճիռներ հավաքելը. պա-
տառ=ըմի պատառ, *պատառ-ոտի=շատ պատառներ», իսկ պա-
տառ-ոտ-ել =շատ պատառներ անել» կամ «պատառ-պատառ
անել». թուղթ=ըմի թուղթ», *թղթ-տի=շատ թղթեր», իսկ թղթ-
-տի=շատ թղթեր շրջել... և այլն:²

Ածականների մեջ էլ հայտնի է, որ -ոտ ածանցը, ինչի վրա
որ զրված է, այն բանից շատ ունեցող հատկութիւն է ցույց տա-
լիս, օր՝ «փուշ» բառը գոյական է, սրան -ոտ ածանցն ավելանա-
լով՝ կստացվի. *փուշ+ոտ > փշ-ոտ=շատ փուշ ունեցող որևէ բան՝

1 Այս աստ եղբանի հավաքականը զեր այսօր էլ զոտնպանվում է որպէս
բայխաների մեջ, իսկ անունների մեջ չի մնացել. եթե հաշվի չառնենք «արմ»
բառից՝ արմ-ատ=արմ-ատի+ք, «նեղող» բառից՝ «նեղող-ատ, գիտուց բառից՝ «գլ-
-ատ» (=ակ), «հասուց բառից՝ «հասու-ատ...» և այլն, որտեղ դա՝ այդ «առաջ եղբանի
հավաքական» այսօր հիմնականում բառաստեղծական դերում է հանդիս զալիս.
Սրա հետ չպետք է շփոթել «տի»=Տի «տարբիք» բառը, որը բարդությունների
մեջ «առ հոդակտորով նույն «առ-տի» ձևով, բայց, ինտիկե, այլ իմաստով է հան-
դիս զտիս, օր՝ բազմ-ա-տի=«տարբիք» շատ՝ ծերունի», գեռ-ա-տի կամ «նոր-ա-
-տի «տարբիքը նոր» և այլն Գուցե այս շփոթության պատճառով է, որ հայե-
րենում՝ զրաբարում և ընդհանրապես աշխարհաբարում՝ -տի մասնիկը սովո-
րաբար չի հանդիպում, եթե հաշվի չառնենք Ազուլիսի բարբառը (տե՛ս՝ Անա-
պան, Թնութ, Ազուլիսի բարբառի, էջ 178—185), որ հարուստ է -տի մաս-
նիկավոր հոգնակի կամ հավաքական ձեռով, ինչպես օր՝ պըռվ-ատի+ք պա-
ռավանիներ», զըզր-ատի+ք «գտարներ», ըսկըռ-ատի+ք «ոսկորներ», սրմ-ատի+ք
«սերմեր» և այլն:

2 Շտափի գաղափար արտահայտող -ատ ածանցավոր բայխաները, այս
կամ այն չափով, պատահում են հայերենում, թե զրաբարում և թե աշխարհա-
բարում: Պարզ է, որ -ատի մասնիկավոր հոգնակի բառաձևերը՝ անունները,
ինչպես կարծում եմ, պետք է գոյություն ունենային հայերենում, որ զեր
այսօր էլ պահանակ է Ազուլիսի բարբառը (ցույց է տրված նախորդ ծանո-
թություններից մեկում): Մեզ հետաքրքրող -ատի, -սի, -ռի հոգնակիներից
միակ տարածվածը -ատի մասնիկն է Ազուլիսի բարբառում, որը և անցել է
բայերին՝ ատի > ատ փոխանցումով՝ նույն համար գաղափարն արտահայտելով, ինչ-
պես օր՝ հըկ ատ-իլ «հարբառել», կար-ատ-իլ «կտրառել», բշտ-ատ-ել «բշտուել»
ամբողջ մարմինը բշտիկներ հանել, ծկծկ-ատ-ել «ծակծկուտել», կպ-կղ-ատ-ել
«կապկապուել», թկ-ատ-ել || թկթկ-ատ-ել «բոլորին էլ ծեծել», թք-ատ-ել «թքո-
տել», փշր-ատ-ել «փշրտել», բռն-ատ-ել «բռնուտել»... և այլն:

թուփ, ծառ... և այլն, այսպես նաև՝ մազ—մաղ-ռա, ստվեր—ստվեր-ռա, ծաղկի—ծաղկ-ռա, տերե—տերե-ռա... և այլն Այսպիսի դեպքերում էլ -ռա ածանցը՝ -ռա ի հոգնակի մասնիկի նման՝ շատի գաղափար է արտահայտում (գոյականը, սակայն, ածական դարձնելով):

Այսպիսով, ուրեմն, -ատ-ի, -ռա-ի, -տ-ի ածանցները, որպես հրբեմնի հավաքական կամ հօգնակի մասնիկներ, շատի գաղափար են արտահայտում ինչպես անունների մեջ առհասարակ, այնպես էլ բայերի մեջ:

Դործ է ածվում նստել և նստ-ռա-ել բայաձեկերը, ասում ենք «նա նստեց», իսկ «նրանք (նստեցին կամ) նստուեցին» [բայց չի լինի տսել՝ «նա նստուեց», որովհետև նստուել բայց նշանակում է միայն շատերի շատ տեղերը նստել], այլև՝ «նա պառկեց», իսկ «նրանք (պառկեցին կամ) պառկուեցին»։ «Ճին սատեկեց», իսկ «Ճիերը... սատկուեցին»։ մեկը հարբեց, իսկ «ըռլորը... հարբուեցին»։ «Նա քնեց», իսկ «նրանք... քնուեցին»... և այլն:

Այստեղ՝ վերնի օրինակներում ռու հոգնակին, ինչպես տեսնում ենք, ցույց է տալիս գործող շատ անձերի այս կամ այն գործողությունը՝ ուրիշ կերպ տատձ՝ այդ ռու հոգնածանցի մոտ ենթական հոգնակի է զրված:¹

Բայց շատ հաճախ է պատահում, երբ ուղիղ խնդիրը, որի նկատմամբ ենթական իր գործողությունն է կատարում, նմանապես հոգնակի է դրվում՝ շնորհիվ այդ՝ -ատ, -ռա, -տ հոգնակի ածանցների։ Այսպես, օր., ասում ենք՝ «մեկին բռնեց», իսկ «շատին (բռնեց կամ) բռնուեց» [բայց չի ասվում «մեկին բռնուեց», քանի որ «բռնուել» նշանակում է «շատերին բռնել»], այլև՝ «զուռը կողպեց», բայց ոչ՝ «զուռը կողպուեց», այլ «զուները կողպատեց (կամ կողպեց)»։ «Ճառը պոկեց», բայց՝ «Ճառները պոկուեց»։² «Ճեռքը կապեց», բայց՝ «Ճեռքները կապու-

¹ Իսկ երբ ենթական մնում է եղակի, նշանակում է, որ այդ նույն ենթակայի գործողությունը կրկնվում է ընդհանրապես՝ բազմակի անգամ կատարվելով, օր.՝ «Նա ցատկեց և ցատկ-ռա-եց», վերջին բայաձեռը ցույց է տալիս, որ ենթական ցատկելու շահ մեկից ավելի գործողություն կատարեց։

² Ղ. Աղայանի «Ճորք Անքեղը-ռում հետեւյան ենք կարգում՝ «տոտ, պոկուեմ ամբողջ անտառը, այսակեղ անտառը հավաքական է, որը շահ ծառերի գաղափար է առլիս, այսինքն՝ «պոկատեմ անտառը նշանակում է «զուռինեմ ժառերը»։

տեց».¹ «Թուղթը շպրտեց», բայց՝ «քրիերը շպրտ-ուտ-եց» [օր.] «ինչ աքացիք (=քացիներ) շպրտուտել դեմ ու դեն»... Ղ. Ազայան, «Ընտ. երկ.», էջ 249]. «պնակը դրեց», բայց՝ «պնակները դրուեց».² «մեկին թակեց», բայց՝ «քալարին թակուեց»։ «գեղձը կլանեց», բայց՝ «գեղձները կլանուեց»։ «շորը հանեց», բայց՝ «շորները հանուեց»։ «սենյակը հավաքեց», բայց՝ «սենյակները հավաքուեց»։ «արտը հնձեց», բայց՝ «արտերը հնձաւեց»։ «ոչխարը մորթեց», բայց՝ «ոչխարները մորթաւեց»։ «գորդը փռեց», բայց՝ «գորգիրը փռուեց»։ «կրակը վառեց», բայց՝ «կրակները վառուեց»... և այլն։

Կարող է պատահել, որ միանման հոգնածանց բայտաձևերի մոտ կրող խնդիրը՝ ուղղակի օրեկտը եղակի մնա. այսպիսի գեղձքերում նշանակում է, որ գործողությունն այդ խնդրի շատ մասերում է կատարվում, օր՝ շացը կտրելը նշանակում է «մի մասի կտրել», զիցուք թե՛ մեջտեղից, իսկ շացը կտրվելը նշանակում է այդ նույն հացը շշատ մասերի կտրելը. այսպես նաև՝ կարելի է ասել՝ նրան թե կծեց և թե կծաւեց. վերջինս շշատ կծել շատ տեղերը կծել, այսինքն՝ շշատ տեղերում կամ շատ անզամ կծելը նշանակությամբ. հողը թե քանդեց և թե քանդուեց. վերջինս շշատ քանդել, շատ տեղերը քանդելը նշանակությամբ. Երան թե կմշտեց և թե կմշտաւեց շշատ կմշտել, շատ տեղերը կմշտելը նշանակությամբ. բաւրը թե պատռեց՝ մի մասի և թե պատռուեց՝ շատ մասերի. տեսրը թե նկեց և թե ճղուեց. դուռը թե զարդեց և թե ջարդուեց... և այլն։

Ուրեմն, ինչպես վերևի մի շարք օրինակներից տեսանք, -ատ, -ոտ, -ու հոգնածանցները հանդես են գալիս ինչպես անանցողական՝ չեղոք, այսպես էլ անցողական բայերի մեջ: Երբ բայն անցողական՝ է, այդ ածանցները սովորաբար ենթակայի՝ սուրեկ-

¹ Ղ. Ազայանի «Ընտիր երկեր» միհատորյակում (Երևան, 1940, էջ 225: կարդում ենց՝ «Մրան ավելի հեշտությամբ կալուեցին եղբոր կողքին», ուրեմն կապաւում են մեկին, փախանակ՝ շատեցին. այս դեպքում նշանակում է՝ կապում են մեկի ձեռմերը, սմերը... և այլն, այսինքն՝ մեկի համար զարդյալ տամ դադախարը. պահպանված՝ է:

² Դմել բայի կողքին դործ է ածվում դարսել բայց, առաջինը սովորաբար մեկի համար, առենք՝ զիբոր դրեց, կամ զրբեր դրեց—միանդամից, ինչպես մի գիշք, երկորդը՝ շատերի համար, օր՝ զրբեր դարսեց, այսինքն՝ գնել մեկ-մեկ, երկու-երկու... և այլն, բայց ոչ թե միանդամից: Դործ է ածվում նաև դարսել բայի սաստկականը՝ գարսուել, օր՝ «զրբեր դարսուեց» նշանակում է ըրուը գրքերը դարսեց՝ մեկ-մեկ, երկու-երկու... և այլն։

տի հոգնակի թվի, այսպես ասած, կրկնակի դադափար են պարունակում բայց մեջ (օր՝ նրանք նստառեցին): Ասում ենք՝ հոգնակի թվի կրկնակի գաղափար, որովհետև կարելի է ասել ոչ միայն նրանք նստառեցին, այլև նրանք նստացին, առանց -ու հոգնածանցի: Երկու դեպքում էլ ենթական, ինչպես տեսնում ենք, հոգնակի է դրված, սակայն այն տարրերությամբ, որ առաջինը՝ «նստառեցին» ենթակայի հոգնակի թվի հետ միասին ցույց է տալիս նստելու գործողության տարրեր տեղերն ու տեղականությունը՝ ինտենսիվությունը, իսկ երկրորդը՝ «նստացին» ենթակայի լոկ միայն հոգնակիությունն է շեշտում, որ նստողը շատ է՝ մեկից ավելի:

Սակայն, երբ բայն անցողական է, հիշյալ հոգնածանցներն այլևս ենթակայի թվի հետ չեն կապվում: Այս դեպքում դրանք՝ այդ հոգնածանցները կապվում են ընդհանրապես կրող խնդրի, այն է՝ ուղղակի օբեկտի հետ և ցույց են տալիս նրա, այսինքն՝ կրող խնդրի կամ շատ լինելը, կամ էլ գործողության՝ նրա շատ մասերում կատարվելը (օր՝ «զողերին բռնություն» և «բաւլքը դատառություն»):

Աւրիշ խոսքով ասած՝ աստ, աստ, աս հոգնածանց-անցողական բայերն անացողական, այսինքն՝ կրավորական դարձնել: Այսպիսի դեպքերում կրող խնդրի հայտնի է, շրջվում է ենթակայի, այլ կերպ ասած՝ ուղղակի օբեկտը սուբյեկտ է դառնում, իսկ սուբյեկտը՝ անուղղակի-օբեկտ, օր՝ «նա գոդերին բռն-ու-եց», իսկ շրջված՝ «զողերը բռնությունն նրանից», կամ էլ՝ «նա բաւլքը պատռություն», իսկ շրջված՝ «զողերը ավելի թղթերի նկատմամբ կատարվեց, նույնը և՝ մեկից ավելի թղթերի նկատմամբ»:

Դժվար չէ, սակայն, հոգնածանց-անցողական բայերն անացողական, այսինքն՝ կրավորական դարձնել: Այսպիսի դեպքերում կրող խնդրի ինչպես հայտնի է, շրջվում է ենթակայի, այլ կերպ ասած՝ ուղղակի օբեկտը սուբյեկտ է դառնում, իսկ սուբյեկտը՝ անուղղակի-օբեկտ, օր՝ «նա գոդերին բռն-ու-եց», իսկ շրջված՝ «զողերը բռնությունն նրանից», կամ էլ՝ «նա բաւլքը պատռություն», իսկ շրջված՝ «զողերը պատռությունն նրանից»...

Այսպիսի դեպքերում, երբ հոգնածանց-անցողական բայերի մեջ կրող խնդրի գաղափարը միմիայն հոգնակի է (օր՝ բռնություն =միմիայն շատերին բռնեցը), շրջվելիս, այսինքն՝ բայերը կրավորական դառնալիս՝ նըանց մեջ արդեն ենթական է արտահայտվում հոգնակի, օր՝ «բռնություն=շատերը բռնվեցին», ինչպես այդ լինում է չհղող բայերի ժամանակ (հմմտ, «նրանք

նստուտեցին»), իսկ երբ հոգնածանց-անցողական բայերը կըու խնդիրը նաև եղակի են առնում, զրջվելու, այսինքն՝ անանցողական դառնալիս՝ ենթական թողնելով եղակի՝ նախկին կրող խնդրի շատ մասերում կատարվելու բայի գործողության գաղափարը (հմմտ, քրուղը պատուեց) անցած է լինում արդեն այդ սույն ենթակային, այսպես ասած, կրավորածե օր՝¹ քրուղը պատումից նշանակում է, որ թուղթը (ենթական) պատռելու գործողությունը կրեց իր շատ մասերում:

§ 3. Հոգեակի բառածանցները քարքիլական լեզուներում՝ հայերենի համեմատ և վրց. ջօ- (ղա-.) նախարայամասնիկը. Այս երեսույթը, այսինքն անվան -ատ-ի, -ոտ-ի, -ա-ի հոգնակի մասնիկների՝ բայի մեջ հանդիս գալը և ցույց տալ գործողության՝ շատ անձերի կողմից կամ սովորաբար շատ կրազ խնդիրների նկատմամբ կամ էլ կրող խնդրի շատ մասերում կատարվելը, որն, ըստ երեսույթին, այդ հոգնածանցների ամենանախնական պաշտոնը պետք է լիներ, միայն հայերենին չէ, որ հատուկ է: Նման երեսույթ կա նբա վրացերենում:

Հայոնի է, որ հին վրացերենի հոգնակի մասնիկն է -ն -ն, օր՝¹ Ծրջմղ-օ ցրեմլ-ի «արցունք» բառի հոգնակին է՝ Ծրջմղ-ն-օ ցրեմլ-ն-ի «արցունք-ներ», տօծ-օ քմա-յ «մաղ» բառի հոգնակին՝ տօծ-ն-օ քմա-ն-ի «մաղ-եր», յօհոռ-օ «բաշոր-ի «գանգուր» բառի հոգնակին՝ յօհոռ-ն-ի «գանգուրներ» և այլն:

Հին վրացերենի այս հոգնակի -ն -ն մասնիկը կարող է հանդես գալ անցողական բայերի անցյալ կատարյալ և նրա ընից կազմված ձևերում ու ցույց տալ, որ ենթական իր գործողությունը շատ կրազ խնդիրների նկատմամբ է կատարում: Օր՝¹ ջօ-օ-ջն-օ դա-ի-նր-ա վրացերենում նշանակում է «իր կամ իրեն համար ինչ-որ բան կտրեց», օր՝¹ տօծ-օ ջօ-օ-ջն-օ քմա-յ դա-ի-նր-ա = «իր մազը կտր-եց», իսկ ջօ-օ-ջն-ն-օ դա-ի-նր-ն-ա՝ «կտր-տ-եց», օր՝¹ տօծ-ն-օ ջօ-օ-ջն-ն-օ քմա-ն-ի դա-ի-նր-ն-ա «իր մազերը (*=մաղ-տի) կտր-տ-եց», այսպես նաև՝ ցօ-ջօ-ց-ջօ-լու-թյունը և այլն:

1 Այս երեսույթը հին վրացերենում նկատած ունի ն. Մառ (H. Я. Marr, Грузинская поэма „Витязь в барсовой шкуре“ Шоты из Рустава и новая культурно-историческая проблема. Петроград, 1917, էջ 432—3): Ե. Խաւրավիլ «Վագրենավոր» պոեմի մողանե-ն-ջո մովասի-ն-եթ «ցեր-տ-ենք» բառի կապակցությամբ, որտեղ -ն մասնիկը ցույց է տալիս օբեկտի հոգնակիությունը և այլն:

գամ-ու-շալ-ա նշանակում է Շնրա կամ նրա համար ինչ-որ բան բաց-եց, օր՝ յտիոր-օ ցա-ջա-ց-թօլ-օ քոչոր-ի գա-դա-ու-շալ-ա «Նրա գանգուրը բաց-եց», իսկ ցա-ջա-ց-թօլ-ն-օ ցա-դա-ու-շալ-ն-ա «բաց-ու-եց», օր՝ յտիոր-ն-օ ցա-ջա-ց-թօլ-ն-օ քոչոր-ն-ի գա-դա-ու-շալ-ն-ա «Նրա գանգուրները (=*գանզը-ստի) բաց-ու-եց». Ցո-օ-ֆյոր-օ մո-ի-ծուր-ա պա-ի-ծուր-ա նշանակում է «իր կամ իրեն համար ինչ-որ բան սրբ-եց՝ մաքր-եց», օր՝ յոհոմլ-օ Ցո-օ-ֆյոր-օ ցրեմլ-ի մա-ի-ծուր-ա «իր արցունքը սրբ-եց», իսկ Ցո-օ-ֆյոր-ն-օ մո-ի-ծուր-ն-ա՝ «սրբ-ու-եց», օր՝ յոհոմլ-ն-օ Ցո-օ-ֆյոր-ն-օ ցրեմլ-ն-ի մոխ-ծուր-ն-ա «իր արցունքները (=*արցունք-ստի) սրբ-ու-եց» և այլն, և այլն¹.

Այսպիսի երեսույթ գեռ այսօր էլ կարելի է տեսնել վրց. լեռնային բարբառներն օգտագործող մի շարք գրողների և այն-անդի ժողովրդի ստեղծագործությունների լեզվի մեջ։ Նոր գրական վրացերենը, սակայն, այսպիսի տարբերակում այլևս չի դնում այդ նույն անցողական բայերի մեջ, որովհետեւ ինչպես անցողական, այնպես էլ անանցողական բայերում այդ նույն երեսույթն արգեն ուրիշ միջոցով է արտահայտում։ Դա, ինչպես հայտնի է, վրց. ջօ-դա-նախաբայամասնիկն է, որի սկզբնական պաշտոնն էր գործողության ուղղություն ցույց տալը վերեվից ներքեւ՝ մի բանի վրա։

Ուրեմն, այն բայերը, որոնց մեջ այդ ջօ-դա-նախաբայամասնիկը գործողության ուղղություն չի ցույց տալիս [իսկ դա շատ սովորական է այսօրվա վրացերենի համար, որովհետև վերելից ներքև ուղղություն ցույց տալու համար արդեն սովորական է գարձել հօ-չա-նախաբայամասնիկը], համազոր են մեր-ատ, -ուտ, -ու հոգնածանց համտպատասխան բայերին՝ իրենց արտահայտած իմաստով։

Օրինակ, վերեսում բերված վրց. ջօ-օ-ֆյոր-օ դա-ի-նը-ա բայաձեկին գործ է ածվում այլ բայաձամանիկագոր ձև ևս՝ Ցո-

¹ Բայ երեսույթին, ինչպես հայերենում, այնպես էլ վրացերենում ընդհանրապես տուունների հազնակի մասնիկները բայաձեկի մեջ բայալմաներից անմիջապես հետո են հանդես գալիս, օր՝ վրց. Ցո-օ-ֆյոր-օ ամ-սալ-ն-ա ։ Հյ. բացքառմատների հավաքականը եղել է, հավաքաբար, Ցո-օ-ֆյոր-օ ամ-սալ-ն-ա =*բաց-սա, որոնք հետազոտում բայավերջավորություններով եղել են արդեն Ցո-օ-ֆյոր-օ ամ-սալ-ն-ա = բաց-սա-եց... Այսպես, բառարմատներից բայերը ձևավորվելով, ինչպես կարծում եմ, սրանք՝ բայերը իրենց հետ բերում են սկզբնական բառարմատների հետ միասին նաև նըսնց հավաքական մասնիկները, անշուշտ, իմաստի որոշ երանդավորութերով։

-օ. յե՞-օ մո-ի-նր-ա: Այսօր թռ-օ. յե՞-օ մո-ի-նր-ա ասելով հասկանում ենք «իր կամ իրեն համար ինչոր բան կտրեց», օր՝¹ ոմա թռ-օ. յե՞-օ թմա մո-ի-նր-ա «իր մազը կտրեց», իսկ ջօ-օ. յե՞-օ դա-ի-նր-ա՝ «կտր-տ-եց», օր՝² ոմ-յօ-օ ջօ-օ. յե՞-օ թմ-երի դա-ի-նր-ա «իր մազերը կտր-տ-եց», այլի՝³ որմտ թռ-տեսրա օրմո մո-թխարա «փոռ փոր-եց», իսկ որմո-յօ-օ ջօ-տեսրա օրմո-երի դա-թխարա «փոռ-եր-ը (փոր-) փոռ-ոտ-եց». Եց ծո-ցլոջա իս մո-զիջա «ծառը պակեց», իսկ եց-յօ-օ ջօ-ցլոջա իսե-երի դա-զիջա «ծառ-եր-ը պոկ-ոտ-եց». Ցոյ-օ ցո-յեռա պուրի գա-նրա «հացը կտր-եց», իսկ Ցոյ-օ ցո-յեռա պուրի գա-նրա «հացը կտր-եց» շատ մասերի. ցո-եօս գա-խիտ «պատո-եց», իսկ ջօ-եօս դա-խիտ «պատո-եց», ցո-նցոյն գա-ծղիտա =«կտր-եց»՝ ձեռքով, իսկ ջօ-ցյօն դա-ծղիտա «կտր-տ-եց». Սյօծօն ու-կրինա «կծ-եց», իսկ ջօ-յօնօն դա-կրինա «կծ-ոտ-եց»... յօցծե հեերս «պարում է», իսկ ջօ-ցյօն դա-կեերս «պար-տ-ում է». Եցօն խտիս «ցատկ-ում է», իսկ ջօ-եօն դա-խտիս «ցատկ-ոտ-ում է». Թօ-՛նծօն մի-րիխ «վազ-ում է», իսկ ջօ-՛նծօն դա-րիխ «վազ-վզ-ում է». Ցոյցն փրենս «թըռչ-ում է», իսկ ջօ-ցըցն դա-փրենս «թըռչ-ում է». Յոյօն քրիս «փչում է», իսկ ջօ-յըցօն դա-քրիս «փչ-ոտ-ում է»... մո-մյօն մո-մկիս «կհնաճ-ի», իսկ ջօ-մյօն դա-մկիս «կհնաճ-ոտ-ի». Օ-օնոյցծ ա-անքերս «կվառ-ի», իսկ ջօ-օնոյցծ դա-անքերս «կվառ-ոտ-ի». ցո-օլցծ գա-աղերս «կբաց-ի», իսկ ջօ-օլցծ դա-աղերս «կբաց-ոտ-ի». Ճմո-օցեոծ գամո-ացխորս «կթխ-ի». իսկ ջօ-օցեոծ դա-ացխորս «կթխ-ոտ-ի»... և այլն:¹

Սվաներենում էլ, իմ կարծիքով, նույն երեւոյթը կա, երբ անունների -ար լ -ըր նոգնակի մասնիկը, որ հայերենի հետ ծագումով նույնն է, հանդես է գալիս նաև բայաձեների մեջ՝ ցույց տալով վերջիններիս մեջ սովորաբար օբեկտի հոգնակիությունը, գործողության հաճախակիությունն ու սաստկությունը, այսպէս, օր՝² սվաներեն բայերից՝ լոյց-ջ լիդ'հ-ե նշանակում է «թողնել», բայց լոյց-ջն-ջ լիդ'հ-ըր-ե <*լիդ'հ-ար-ե՝ «շատ լ շատերին թող-

¹ Վեց ցօ- դա- նախաբայամանիկը սովորաբար վերեկց՝ մէ ըսնէ վրա՝ ուղղություն ցույց տալու և մյուս նախաբայամանիկների նման ներկա բայաձեներից ապառնու ձեեր սոնդելու դեպում, սակայն, հիմտկանում ի վիճակի չի լինում ներկայում և ապառնիսում շատի գաղտփարն արտահայտել նոր վրացերենում:

նելք: լոօնծ-օ լիզզ-ի «ուղարկել», բայց՝ լոօնծ-ջհ-օ լիզզ-ըր-եւ
*լիզզ-ար-եւ՝ «շատերին ուղարկել»... և այլն:¹

§ 4. -Աս-ի, -ոս-ի, -ու-ի բառածանցների ձևա-իմաստային համար-
ժեմները վրացերենում. Ինչպես տեսանք (§ 2), հյ. ատ-ի ածանցն
էլ, որ հանդես է գալիս բայցաձևերի մեջ և մի ժամանակ հանդես
պետք է գար. նաև անունների մեջ, ինչպես այդ պահպանված է Ազուլիսի բարբառում, երբեմնի հավաքական մասնիկը լինելով՝
ակղքում կատարել է հոգնակերտական դեր՝ շատի գաղափար ար-
տահայտելով: Դեռ այսօր էլ նա որոշ բայցաձևերի մեջ, ինչպես
տեսանք, պահպանել է իր սկզբնական հավաքական կամ շատի
գաղափարը, ինչպես, օր՝ լիդ-ատ-ել «շատ լիդել», կոտր-ատ-ել
փշր-ատ-ել, խած-ատ-ել... և այլն: Անունների մեջ, սակայն, նա
հիմնականում այլևս շատի գաղափարը չի պահպանել եթե հաշ-
վի չառնենք Ազուլիսի բարբառը, այլ տարբեր բառարձատներից
գլխավորապես նորանոր բառաձևեր է ստեղծում՝ սկզբնական
հոգնակերտական դերից բառաստեղծական դերին անցնելով, ինչ-
պես, օր, «արմ» բառից՝ արմ-ատ=արմ-ատիր-ք, «հեղեղ» բառից՝
հեղեղ-ատ, «հաստ» բառից՝ հաստ-ատ (նաև «հաստ-ել || հաստ-ատ-
-ել բայցաձևերը), «փուլ» բառից՝ փլ-ատ(-ակ), «խոր» բառից՝
խոր-խոր-ատ՝ արմատի կրկնությամբ, «բաց» բառից՝ բաց-ատ...
և այլն:

Հյ. այս «տա» ածանցը, որ երբեմնի հավաքական մասնիկն
է, կարելի է տեսնել նաև ուրիշ լեզուներում: Օր, ուռւերենում էլ
ըստ երեսլյթին, նույն երբեմնի հավաքական բառածանցն է, որ,
այս կամ այն չափով, պահպանված է որոշ բառաձևերում, ինչ-
պես, օր՝ յս-ատ-եայ «բեխերավոր», վօլոս-ատ-եայ «մաղ-ոտ, փըրչ-
-ոտ», հօռ-ատ-եայ «փուփուլավոր», ցցունավոր... և այլն: Այս նույն

¹ Այս օբինակները բերում եմ Ն. Մալի Կ вопросу о положении аб-
хазского языка среди яфетических. С.-Петербург, 1912. էջ 15—16: Այս
երեսլյթը սկաներենում նկատել է Ն. Մալի: Նման երեսլյթ, իմ կարծիքով,
կա նաև կովկասյան լեզուներից, օր., արխազերենում: Արխազ. հոգնակի մաս-
նիկներից է նաև՝ զ (հ'ա)=հյ, զ=վըց-ք, որն անցած պետք է լինի նաև բայե-
րին՝ նույն շատի գաղափարով այսպես, օր՝ արխազ. ունալա-զ(հ'ա)-իստ=չգու
շատ ժանբացարչ արխազ. յաս զ(հ'ա)-ն=շնա շատ նեղացավ... Այսպես նաև
արխազ. ձ(ա)=հյ. Տագնակի մասնիկով՝ շատ(ա)-դիշթ չգու շատ քննցիր, ար-
խազ. իսթախ-ձ(ա)-զ=շամեն ինչ տասցիր... և այլն [այս օրինակները բերում
եմ]: Քանի Լամբարդինի օգծածուրո յնուն Ծամանտշորո գուլաշին գրքից, Թբիլիսի,
1945. էջ 169]:

ածանցն է, ըստ իս, որ կա նաև վրացերենում՝ հոգնա-բառաստեղ-
ծական դերով. այսպես օր, վրց. տօց-օ քավ-ի «գլուխ» բառից
տօց-օգ-օ քավ-ադ-ի «զլիս-անի» զլիս-ավոր՝ իշխան», ջց՛-օ փեր-ի
«գուշյն» բառից՝ ջց՛-օգ-օ փեր-ադ-ի «գուշնավոր» գուշնգուշյն»
Ծօն-օ տան-ի «մարմին» բառից՝ Ծօն-օգ-օ տան-ադ-ի «մարմի-եղ»,
ծյշ-օ պուր-ի «հաց» բառից՝ ծյշ-օգ-օ պուր-ադ-ի «հաց-անի» հա-
ցով՝ առատաձեռն», ցյլ-օ գուլ-ի «սիրտ» բառից՝ ցյլ-օգ-օ գուլ-
-ադ-ի «սրտու», տօցօ-օ բվալ-ի «աչք» բառից՝ տօցօ-օգ-օ բվալ-
-ադ-ի «աչ-եղ», տեսքով...՝¹ և այլն:

Հիշյալ ածանցի նման, վրց. -օգ-ոդ=հյ. -ու և վրց. -օգ-դ
=հյ. -ու բայածանցներն էլ իմաստի ու գործածության որոշ
երանգավորումներով՝ երկու լեզվում էլ միևնույն աղբյուրից դա-
լով՝ սկզբում արտահայտել են, անշըռչա, հավաքական կամ շատի
գաղափարը, որ այսօր էլ առավել կամ նվազ չափով, պահպան-
վել է որոշ բայաձեռներում: Այդպիսի բայաձեռներից են, օր., ինչ-
պես գիտենք, հյ. մորթ-ու-ել «բոլորն էլ մորթել», հնձ-ու-ել
վառ-ու-ել... կար-ու-ել «շատ մասերի կտրել», բեկ-ու-ել պտր-ո-
-ել... և այլն:

Միևնույն՝ ածանցներով այդ նույն շատի գաղափարը վրա-
ցերենում, սակայն, արտահայտվում է գործողության տևականու-
թյամբ: Սա դրսնորգվում է այնպիսի բայաձեռներում, որոնց մեջ գոր-
ծողությունն սկսված, բայց վերջացած չէ: Դրանք անցյալ-ան-
կատար և նրա բնից կազմված բայաձեռն են: Դրանցից է, օր.,
վրց. օ-ցնուց-օգ-օ ա-ենիքեր-ոդ-ա վառվում էր, վառ-ու-վում էր»
բայաձելը, որով հասկացվում է՝ վառվելու գործողությունը սկըս-
ված, բայց վերջացած չէ, և նա անում է անցյալում շարունա-
կաբար, հաճախ ընդհատ-ընդհատ՝ շղթայի անվերջ կրկնվող օդակ-
ների պես՝ ցույց տալով այդ նույն գործողության սովորական
կամ մշտական կրկնությունը, այն է՝ ամեն անդամ նրա կա-
տարվելը:

¹ Կ= նաև՝ տօց-օգ-օ բվալ-եդ-ի «աչ-ուի» ակ-անի» ձեր, որաեղ ։ օգ
-ոդ ածանցի տեղ ։ ջց ։ եդ փոփոխակն է հանդես եկած: Սա, ըստ երիտյթին,
երկակի՝ հավաքական թվի գաղափար է արտահայտել մի ժամանակ վրացերե-
նում: Հիշյալ բառաձեկի նման նաև՝ յօն-յօն կար-եդ-ի «գր-ուի» գր-անի», մյօն-
-յօն մաւլ-եդ-ի «ծնկ-ուի» ծնկ-անի», ֆանծ-յօն-օ ծարք-եդ-ի «ունք-ուի» ունք-ա-
-նի», այլև՝ յօն-յօն գեռաւ-եդ-ի «աբմ-ատի+ք» աբմատ-անի», չշան-յօն-օ ջուար-
-եդ-ի «կաչ-անի», ծան-յօն-օ խառ-եդ-ի «պատկեր-անի», նյօն-յօն-օ ուռ-եդ-ի
«յուզանի» ճյօւզավոր... և այլն:

Այսպիսի բայաձներից են նաև՝ Ձ-Ծօտլցըծ-ուց-օ ա-ծիբլիք-
-ոդ-ա «կարմրում էր կամ կկարմրեր», Յա-օ՛թլցծ-ուց-օ զա-իշեր-
-ոդ-ա «բացվում էր», Իօ-յոցծ-ուց-օ չա-քրեր-ոդ-ա «հանդչում էր...
Ծ-Ծլց-օ դա-լել-դ-ա «խմում էր», Ծ-Ծլց-օ դա-ծեր-դ-ա «դրում
էր», Խօնցուծ-օ ճախուլոր-դ-ա «տեսնում էր նրան», Խոնցուծ-
-օ ջուլոր-դ-ա «ճարում էր», Ճոնցուծ-օ պրուլոր-դ-ա «գտնում
էր»... և այլն:

Այստեղ՝ բոլոր գեպքերում էլ, ինչպես տեսնում ենք, գոր-
ծողությունը սկսված է և շարունակվում է, հետեւապես և տևական
է, հաճախ սովորական ու կրկնական: Այս բայերի մեջ առաջ է
եկել առարկայի շատի գաղափարից բայի ցույց տված գործողու-
թյան շատի գաղափարի, այն է՝ գործողության տեսականության
կամ կրկնության փոխանցումով: Այս փոխանցումը կատարվել
է շնորհիվ վրց. -օջ -աղ, -ուջ -ող, -ջ -դ և հյ. -ատ, -ու, -ու հա-
մարժեք, երբեմնի հավաքական ածանցների, որոնք միևնույն
ժամանակով լինելով՝ երկու լիդլում էլ ենտագայում, այս կամ այն
չափով, իմաստի տարբեր երանգավորութեար են ձեռք բերել
որով և նրանք տարբերվում են այսօր իբրարից:

Մանոք. Հայերենում սովորաբար կատարվել է տ>ծ փոխանցու-
մը, որը իմաստային որոշ երանգավորում առաջ բերելով՝
վերջին հաշվով կատարել է, այս կամ այն չափով, բառա-
ստեղծական զեր: Այս փոխանցումը ոչ միայն մասնիկների,
այլև առանձին բառերի կամ բառարմատների մեջ է կա-
տարվել՝ իմաստի որոշ երանգավորումով, ինչպես օր՝ մուտ
—մուծ, խայտ—խայծ, տատանել—ծածանել՝ (հ)պարտ—
պարծ, բիրտ—պիղծ... և այլն:

Նման փոխանցում կարելի է տեսնել նաև՝ -ու || տի,
-ատ || -ատի երբեմնի հոգնակի մասնիկների մեջ, որոնց ձևա-
խմաստային համարժեքը վրացերենում -ջ -դ || -օջ -աղ է: Սրանք հայերենում տալիս են -ծ || ծի, -ած || ածի փոխանցու-
մը (ի տարբերություն վրացերենի):

Հայտնի է, որ հայերենում «խավ» բառից գոյություն
ունի մի կողմից՝ խավ-ար+տ «կանաչեղեն», ուստի բան-
ջար և մյուս կողմից՝ սրա հնչյունափոխված ձեզ՝ խավ-
-ար+ծի < *խավ-ար+տի ձեից՝ իմաստային երանգավորու-
մով՝ «որթի փափուկ», կակուղ և մատղաշ ծիլ». այսպես նաև՝

«թավճ բառից՝ թավ-ար+տ և թավ-ար-ծի¹< *թավ-ար+տի ձևից, այլի՝ աղ-ար+ծի< *աղ-ար+տի ձևից՝ պատկուկ, մատղաշ» նշանակությամբ. «քեր-ելը բայից՝ *քեր-տ-ել> քեր-ք-ել և քեր-ծ-ել՝ իմաստի երանգավորումով... և այն:

Նման փոխանցման արդյունքը պետք է համարել նաև, իմ կարծիքով, հետեւյալ զուգակից ձևերը՝ իմաստի որոշ երանգավորումով՝ հեղեղ-ատ՝ և հեղեղ-ած, փլ-ատ և փլ-ատ+տակ և փլ-ած, բաց-ատ և բաց-ած, տերե-ատ և տերե-ած, ձղ-ատ=բնելը || ճեղքվածք և ճղ-ած, խանձ-ատ և խանձ-ատ-ել և խանձ-ած «էրած», խած-ատ || խած-ատ-ել և խած-ած, փշր-ատ և փշր-ատ-ել և փշր-ած...

Այս փոխանցումը կատարելով -ատ երբեմնի հողնակի մասնիկը՝ միաժամանակ, ինչպես սովորաբար մյօւս հոգնակի մասնիկները, սկզբնական-հոգնակերտական գաղափարից անցնում է երկրորդական բառաստեղծական գաղափարին՝ առանձին բառերից նոր բառանձներ ստեղծելով: Այսպես օր՝ դիցուք, թե եղել է «ճղ || ճեղ» բառարմատը, որից տարբեր մասնիկներով մի ժամանակ կազմվել են՝ ճեղ-է || *ճղ-ատ, դրեթե նույն ճնշելը ճեղքվածք նշանակությամբ. վերջինս՝ ճղ-ատ>ճղ-ած հնչյունական փոխանցմամբ առաջ է բներել իմաստի որոշ երանգավորում և ձևով ու բովանդակությամբ ճղ-ած տարբերվել է, այսպես աստեղ, իր նախատիպից՝ «ճղ-ատ» ձևից. այսպես նաև՝ «փլ-ատ» բառաձևից առաջ գալով «փլ-ած» ձևը իր ձևահիմաստային երանգավորումով, ընականաբար, աւըբերվում է առաջինից՝ «փլ-ատ» ձևից, ինչպես նաև՝ «վարար-ատ» || «վարար-ատ-ել» || վարար-ստ-ելը ձևից՝ վարար-ած=վրց. Եցօօջօ գվի-ադի՝ «զվավ-|| զվիվ-|| զվի-» բառից, որտեղ հյ.-ատ մասնիկի նախատիպը՝ -ադ մասնիկը վրացերենում նույնությամբ պահպանված է, նմանապես և հյ. «փորով-ատ» || խորով-ատ-ել || խորով-ստ-ելը ձևից՝ խորով-ած=վրց. Եցօօջօ ծվ-ադի՝ -ած || -ատ=«-ադ» մասնիկներով. հյ. կոչ-ած< *կոչ-ատ=վրց. ՎՅՅՅ-օջօ ծվեվ-ադի, որից՝ ախալ-ծվեվ-ադի «նոր-կոչ-ած || նորակոչիկը. հյ. հատ-ած < *հատ-ատ || կոր-ած < *կոր-ատ ||

1 Օք. «Թավածունի ձորձեր հաղած մարզիկն. տե՛ս Գ. Զոհքար, Նովելներ Երևան, 1941. հջ 188, տ. 12:

կտր-ատ-ել=վրց. Յու-օջ-օ նր-ադ-ի՝ վրց. նր-ա և կտր-ելը բա-
սից՝ նույն «ադ» մասնիկով կազմված... և այլն:

Այս կարգի դուգակից միևնույն -ատ || -ած || -ադ մասնի-
կավոր ձեերը երկու լեզվում էլ, այս կամ այն չափով, կան:
Բայց սովորաբար թե մեկ և թե մյուս լեզվում ավելի հեշտ
է նույն կաղմության տարբեր ձեերը դժոնել, ինչպես օր՝
վրց. ցհօ- փրի- և ծցօ- մետ- և ավելի» բառերից կազմված
են՝ ցհօ-օջ-օ փրի-ադ-ի «զերազանցիկ» և ծցօ-օջ-օ մետ-տդ-
-ի «տռավել», չափազանց=հյ. (այլ առումով)՝ յ-ավել-ու-
ած<*յ-ալել-ու-ատ և ավելը բառից, նույն -ած || -ատ մաս-
նիկով կազմված: Այսպիս նաև՝ վրց. ֆյոր-օ ծեր-ո գրելը
բառից՝ ֆյոր-օջ-օ ծեր-ադ-ի «զրավոր», օր՝ ծերադի սամու-
շառ գրավոր աշխատանք=հյ. զր-ած=զր-ատ՝ նույն գրը-
բառաբմատից և -ած || -ատ մասնիկով՝ իմաստի այլ առու-
մով, նմանապես իմաստի աարեր առումներով՝ վրց. ցյոյժ-
-օջ-օ Փերք-ադ-ի «պայթուցիկ» և հյ. պայթ-ած<*պայթ-
-ատ. վրց. Խյու-օջ-օ սովլ-ադ-ի «ձեեռովլա պաշար հացահա-
տիկ» և հյ. հոգ-ած || հոգ-աց-ած՝ երկու լեզվում էլ հոգի=
շունչ բառից. վրց. Խյօթ-օջ-օ սամամ-ադ-ի «տպուր» և հյ.
կեր-ած՝ երկու լեզվում էլ տուտ-ելը բառից..., և այլն:

Միևնույն -օջ-ադ || -ատ մասնիկով շատ բառեր կան
գրացերենում, այսպես օր՝ ոօց-օջ-օ քավ-ադ-ի՝ քավի
«զլուխ» բառից՝ «իշխան» նշանակությամբ. ծո՛ր-օջ-օ պիր-
-ադ-ի՝ պիր-ի «անձ» բառից՝ «անձնական», ծցի-օջ-օ պուր-
-ադ-ի՝ պուր-ի «հաց» բառից՝ «հացով», հյուրաներ»... և այլն,
ինչպես նաև նույն -ատ || -ած մասնիկով հայերենում՝ կալ-
-ու-ած || կալ-ու-ած + ք<*կալ-ու-ատ. շին-ու-ած || շին-ու-ած + ք
<*շին-ու-ատ. զր-ու-ած || զր-ու-ած + ք<*զր-ու-ատ. կերտ-ու-
-ած || կեր-տ-ու-ած + ք<*կերտ-ու-ատ. խոս-ու-ած || խոս-ու-
-ած + ք<*խոս-ու-ատ... և այլն:

-Առ մասնիկի ձեա-իմաստային անցումով ստացված
-ած փոփոխակը՝ առարկայի սկզբնական-հոգնակի զաղափա-
-րից լիովին անցնելով մի այլ առարկայի հատկանշի պաղա-
-փարին՝ սովորաբար զրսեորվում է հատկանիշ ցույց տվող
բառաձներում, որոնք հետագայում, այսօրվա մեր գրական
հայերենում, օգտագործվում են, անշուշտ, որպես հարակա-
-տար դերբայի ձեեր, ինչպես օր՝ փլ-ած <*փլ-ատ, քաց-ած,
<*բաց-ատ, բր-ած, փոր-ած, տս-ած... և այլն: Սրանք մի

կողմից առարկայի հատկանիշն են ցույց տալիս և մյուս
կողմից՝ օժանդակ իսյի օգնությամբ արտահայտում են,
այսպիս ասած, «հարակատար ժամանակ»։ Այսպիս օր՝
չգիրք բառից՝ զրած ձեզ զբան թուղթը արտահայտու-
թյան մեջ առարկայի հատկանիշ է ցույց տալիս, իսկ
ողբած է հապակցության մեջ՝ որպես հարակատար դեր-
բայ։ Վերջինս հետագա զարդացման արդյունքն է։

Այս ամ մասնիկին տարբեր բարբառներում, ընակա-
նաբար, փոխարինում են ուրիշ, հետեւալ մասնիկները, ինչ-
պես՝ ան, -ուի, -ուկ... և այլն։ Այսպիս օր՝ զրած զգիր ||
զրելը ձեմից և զրման «զբում» ձեմից՝ ցույց են տալիս թե
առարկայի հատկանիշ (օր՝ զրած թուղթ և զրման թուղթ)՝
և թե հարակատար զերբայ (օր՝ զրած է և զրման է), այս-
պես նաև զրած և զրման, քաշ-ած և քաշմ-ան... զտ-ած
և զտ-ութի... կարգ-ած և կարգ-ուկ, նստ-ած և նստ-ուկ,
պառկ-ած և պառկ-ուկ... և այլն։¹

§ 5. -Ար-այ հոգնակի բառածանցը՝ համեզոր ռու-ի հոգնա-
ծանցին. Բացի -ապ-ի, -ուտ-ի, -տ-ի հոգնակիներից՝ կա նաև -որ
հոգնակին, որն անոււնների մեջ սովորաբար առանձին հանդես չի
դալիս, այլ բարզվում է այլ մասնիկներին։ Օր՝ «արտ» բառի
հոգնակին մի ժամանակ «արտ-որ+այ»² էր. այսպիս նաև՝ վան-
-որ+այ, դաշտ-որ+այ, կալ-որ+այ... Սրանց վերջից կարող է
նորից «-ք» հոգնակի մասնիկն ավելանալ, ինչպես օր՝ «ըտ-որ+
+այ+ք», վան-որ+այ+ք... և այլն։

Սա սովորական երկույթ է հայերենում, հայերենն այնպի-
սի լեզուներից է, որ լոկ մի հոգնակի թվի գաղափարն արտա-
հայտելու համար հաճախ իրար է բարզել երկու, երեք և երբեմն
էլ ավելի հոգնակի մասնիկներ, ինչպես օր՝ մանկ-տի+ք «մա-
նուկներ», աչ-վի+եր+նի-ս «իմ աչքեր», կն-ք+տի+ք «կանայք»,
դոմշ-տ+ան+ք «գուեշներ»... և այլն։

Այսպիսով արտ-որ+այ+ք բառաձեն էլ իրար բաղադրված

1 Այս օրինակները՝ զրմ-ան է=զր-վ-ած է. զրմ-ան է=զր-վ-ած է,
չքաշ-ան է=չքաշ-վ-ած է. դա-ութի է=զոտ-վ-ած է. կարգ-ուկ է=կարգ-վ-
-ած է. նստ-ուկ է=նստ-ած է. պառկ-ուկ է=պառկած է և ոյն՝ բերում
եմ ձանձիկանի «Հնութիւնը Ակնայ» գրքից (Թիֆլիս, 1895. էջ՝ 393—4).

2 Արտ-որ+այ և որա նման ուրիշ բառերի որ+այ հավաքական կամ
հոգնակի վերջավորությունը բրւել է նաև -օր+այ ձեռվ, որ հավանական է ծա-
-դած լինի թ-աւ+ր+այ ձեմից։

երեք հոգնակի մասնիկ ունի «արտեր» (հոգն.) գաղափար արտահայտելու համար: Այդ երեք մասնիկներից առաջինը՝ ուրին էր որ անունների մեջ սովորաբար առանձին չի դորժածվում, իսկ վերջին երկուսը միացյալ՝ այլ+է ձևով՝ դորժածական է նաև առանձին՝ հոգնակի բառաձևերում, ինչպես օր՝ *կան-այլ+է, տիկն-այլ+է, պարոն-այլ+ք... իսկ առանց Հ.-ք» հոգնակի մասնիկի կուն-ինայինը՝ *կան-այլ, *տիկն-այլ, *պարոն-այլ (ինչպես օր՝ վան-ուր+այլ, որից և հետագայում օքա հոգն. մասնիկի բաղադրմամբ՝ վան-որ-այլ+է)... Կարելի է ենթադրել, որ որ մասնիկն էլ առանձին պետք է դորժածվելիս լիներ անունների մեջ, որովհետեւ մենք նրան հանդիպում ենք բայց իր մեջ նաև առանձին դորժածված:

Այստեղ, ի միջի այլոց, պետք է նշել, որ, ինչպես հայտնի է, հայերենը հաճախ դորժուղության կրկնությունը ցույց տալու համար նաև բայցի արժան է կըկնում, օր՝ կապ-եց—կապ-կպ-եց, ծակ-եց—ծակ-ծկ-եց, ծախ-եց—ծախ-ծխ-եց, ծամ-եց—ծամ-ծմ-եց, լափ-եց—լափ-լի-եց, խազ-եց—խազ-մզ-եց («խազ-մազ» կըրկ-նականից), քափ-եց—քափ-թփ-եց... և այլն: Այս կրկնականների վրա է, որ հաճախ դորժուղության կրկնությունն է՛լ ավելի սաստիացնելու համար դրվում են նաև մեզ ծանոթ հոգնածանցները՝ ատ-ի, ոտ-ի, տ-ի, որ-այլ... և ուրիշ շատերը, որ կտևանենք հաջորդ համակածներում:

Այսպես, օր՝ նույն «կապ-ել» բայցից ունենք՝ կապ-կպ-եց և կապ-կպ-ոտ-եց, բայց նաև սրա համազոր ձևերից՝ կապ-կպ-որ-եց, «ծակ-ել» բայցից՝ ծակ-ծկ-եց և ծակ-ծկ-ոտ-եց, բայց նաև՝ ծակ-ծկ-որ-եց. «ծամել» բայցից՝ ծամ-ծմ-եց և ծամ-ծմ-ոտ-եց, բայց նաև՝ ծամ-ծմ-որ-եց. «լափ-ել» բայցից՝ լափ-լի-եց և լափ-լի-ոտ-եց, բայց նաև՝ լափ-լի-որ-եց. «խազ-ել» բայցից՝ խազ-մզ-եց և խազ-մզ-ոտ-եց, բայց նաև՝ խազ-մզ-որ-եց. «թափ-ել» բայցից՝ թափ-թփ-եց և թափ-թփ-ոտ-եց, բայց նաև՝ թափ-թփ-որ-եց. «քաշ-ել» բայցից՝ քաշ-քշ-եց և քաշ-քշ-ոտ-եց, բայց նաև՝ քաշ-քշ-որ-եց. «քանող-ել» բայցից՝ քանող-քնող-եց և քանող-քնող-ոտ-եց, բայց նաև՝ քանող-քնող-որ-եց. «փք-ել» բայցից՝ փք-փք-եց և փք-փք-ոտ-եց, բայց նաև՝ փք-փք-որ-եց. «շատ բշտիկներ դուրս տալ» նշանակությամբ և այլն:

Հիշյալ օրինակներից հեշտ է կռահել, որ ոտ, (-ատ, -ոտ) հոգնածանցը համազոր է որ ածանցին, և սրանք իրար փոխարինում

մնչ Սրբանք՝ երկուան էլ ինչպես տեսնում ենք, իրար կողք-
կողքի հանդես են դալիս զուգակից բայածերում Դրանցից, օր՝
Ղարաբաղի բարբառում գործ են ածվել՝ թե զղղութել և թե
զղղութել՝ միւնույն շշատ այրել, խանձելք նշանակությամբ,
թե լափ-լիփ-ոտել և թե լափ-լիփ-որել՝ լափել ըայի կրկնականը՝
որուրը լափել, թե լպպութել և թե լպպութել կամ լպպութել
կրկ. լիգի՝ ըբուրը լիզելով ուտել-վերջացնել, ինչպես նաև
այս կամ այն բարբառում՝ ծախծին-ոտել և ծախ-լիփ-որել կամ
ծախծին-որել «ամեն ինչ ծախել», ծակծկ-ոտել և ծակծկ-որել
շշատ ծակեր ըանալը, կապկալ-ոտել և կապկալ-որել շշատ կապել
կամ շատերը կապել, ծամծմ-ոտել և ծամծմ-որել շշատ ծամել,
խլխլ-ոտել և խլխլ-որել խազմզ-ոտել և խազմզ-որել շշատ
խազմզել, խանձմնձ-ոտել և խանձմնձ-որել շշատ խանձել, այ-
րել նշանակությամբ... և այլն:

Կարող է նաև արժատը չկրկնվել, օր՝ կարկատ-ոտել և
կարկատ-որել շղանազան բաներ կարկատել, լատտ-ոտել և
լատտ-որել շշատ լատեր՝ հնձած խոտից փոքրիկ-փոքրիկ զե-
զիկներ շինել, բշտ-ոտել և բշտ-որել շշատ բշտիկներ գուրս
տալ... և այլն:

Պատահում է, այն էլ շատ է պատահում, որ մի շարք բա-
յաձեւերում հանդես է դալիս -ոտ (-ատ, -տ) հոգնածանցը, որոշ
բայաձեւերում էլ՝ -որ ածանցը: Այսպիս, օր՝ սովորաբար հան-
դիպում է ջարդ-եց—ջարդ-ոտ-եց, բայց ոչ՝ ջարդ-որ-եց, բռն-եց
—բռն-ոտ-եց, բայց ոչ՝ բռն-որ-եց, կտր-եց—կտր-ոտ-եց, բայց ոչ՝
կտր-որ-եց, պոկեց—պոկ-ոտ-եց, բայց ոչ՝ պոկ-որ-եց, քանդեց—
քանդ-ոտ-եց, բայց ոչ՝ քանդ-որ-եց... և ընդհակառակը՝ բնդեց՝
բնդ-ոտ-եց, բայց, ոչ՝ բնդ-որ-եց, պատատ-եց (=փաթաթեց)—

¹ Մանավանդ որ քարթվելական ինքուներում (-ոտ || ոդ ||) -դ > -՛ հըն-
շունի փոխանցման դեպքեր էլ կան, այսպիս օր՝ վրց, գադմսիղերս-գարմո-
իղերս շվաշ կրերի, վրց, գալմոմիղարարա շվաշմոխտարա շվար է իջել, վրց,
գալմոուսխամս=գարմոուսխամս ատել է, վրց, մօլաղուց-ի=հան. մալաղուց-
է ժթոշաւնի մի տեսակը, վրց, ցիվիր-ի=հան.—մենքը, ցիվիր(ն)-դի- քիթ»
և այլն, այս տեսակակից էլ կասկած չկա, որ -ոտ || -որ մտանիկները եթե ոչ
նույնը, գոնե իրար համազար մասնիկներն են:

² «Բնդել» նշանակում է խոշոր-խոշոր կարել, շուլակել: Վրացերենում էլ
ծղաճք-ց բլանդ-վա=բնդել, շուլակել: Հյ. Բարբառաներում էլ՝ բնդ-ել և
կրկնածանց՝ բնդ-որ-ել (գտվառ, բառարանում չհիշատակված) բայաձեւերը,
անշաւլս, բնդ-ել բայց են ստացված՝ որ > ր > 1 հօգնածանցմամբ, այսպիս, օր.
բնդել > բնդ-որ-ել > բնդ-ր-ել > *բրնդ-ել (միշածանցվելով) > բնդել՝ ր > 1 փո-
խանցումով և ապա՝ բնդ-որ-ել՝ կրկնածանցումով:

պատառ-որ-եց, բայց ոչ՝ պատառ-ուտ-եց, պաշպչ-եց—պաշպչ-որ-եց, բայց ոչ պաշպչ-ուտ-եց, լզլդ-եց «խանինեց»—լզլդ-որ-եց, բայց ոչ՝ լզլդ-ուտ-եց, գլ-եց «թաթաթաթ-որ-եց»—գլ-որ-եց, բայց ոչ՝ գլ-ուտ-եց, փաթաթ-եց—փաթաթ-որ-եց, բայց ոչ՝ փաթաթ-ուտ-եց, ավլիփ-եց («ափ» բառ սից՝ «ափ-բափ» կրկնականով = «մթան» մեջ կույրի նման շոշափելով զնալ կամ մի բանի ման գալը) —ավլիփ-որ-եց, բայց ոչ՝ ավլիփ-ուտ-եց, ծամլմ-եց («ծամելը» բայցից՝ ծամ-ծմ-ել կամ ծամ-լմ-ել) —ծամլմ-որ-եց, բայց ոչ՝ ծամլմ-ուտ-եց, լմլմ-եց (=լուլունել ըուտելիքը ստեղ-ստեղ ծամելելը) —լմլմ-որ-եց, բայց ոչ՝ լմլմ-ուտ-եց... և այլն կամ էլ պատահում է՝ թակ-եց—թակ-ուտ-եց, բայց ոչ՝ թակ-որ-եց, ապա արմատի կրկնությամբ՝ թակլակ-որ-եց, բայց ոչ՝ թակլակ-ուտ-եց (թեև ունենք մի ուրիշ՝ թափ-եց—թափ-ուտ-եց—թափթփ-ուտ-եց), խար-եց—խար-ուտ-եց, բայց ոչ՝ խարլը-որ-եց, խարլը-ուտ-եց բայց ոչ՝ խար-որ-եց և խազմդդ-եց—խազմդդ-ուտ-եց, բայց ոչ՝ խազմդդ-որ-եց, քանդ-եց—քանդ-ուտ-եց, բայց ոչ՝ քանդ-որ-եց և քանդքնդ-եց... և այլն:

§ 6. Ար հոգնածանցի այլոց հետ միացումը, նրա դրափոխությունն ու այլակերպումները բայի մեջ. Ար հոգնածանցը համամտարար ավելի թույլ է, փոփոխական ու գյուրաշարժ։ Նա հաճախ առանձին հանդես չդալով՝ միանում է ուրիշ, օր՝՝ առ, -ուտ, -ուտ և հոգնածանցներին և սովորաբար այլակերպվում է՝ տալով որ>բ>ռ || 1 || 2 :

Ոչ միայն բազադրվելիս, այլև բայտների մեջ առանձին հանդես գալիս՝ որ հոգնածանցը կարող է՝ թ գառնալ,¹ ինչպես օր՝՝ «զունդ>գունու» բառարմատից կազմված է՝ գնտ-ր-ել բայը (ինչպես և «զիլ» արմատից «զլ-ել» և կրկնածանց՝ զլ-տ+ր-ել < *զլ-տ+որ-ել), «զորով» բառարմատից՝ չորով-ր-ել բայը «շատ սիրով ու զորովով համոզել», «թարախ» բառարմատից՝ թարխ-ր-ել «վեբքին կամ պալարին շատ թարախ գոյանալը» և այլն.²

1 Այս՝ ք հոգնածանցը կարող է ստոցված լինել՝ եսու երեխնի հոգնակի մասնիկի ժողովրդական պարզացումից՝ հնչյունափոխությունից. այսպես՝ եսու >եր || -ար || -իր>-ր.

2 Այսաեղ կարելի է նշել զբբ. բառալ «զիր վերցնել, վերացնել» բայի անց. կառաջալը բարձ-ի=աշխարհ. բարձ-եց-ի. արմատն է՝ բարձ, որից՝ բարձ-իշ բարձ-ուն-ի, բարձ-ը: «կերպինս, իմ կարծիքով, նույն ը < ու երբեմնի հոգնածանցով՝ այսաեղ արդեն բառաստեղծական վերով հանդես եկած, հետևապնդ «բարձ» բառարմատը սկզբում ցույց պետք է տար «վիր» (վերցրած), իսկ «բարձ-ը»-ը՝ «շատ վեր» (վերցրած):

Իսկ -ու հոգնածանցին բարդվելիք» որ>ը հոգնածանցը առ-
վորաբար նախորդում է նրան և հաճախ այլակերպվում է թ ր>ո
|| | | շ փոխանցումով թեն, ինարկի, կարող է և իր սկզբնական
ձևով էլ հանդիս գտն Այդպիսի ձևերից են, օր՝ «կրխել» բայից՝
կոխ-ոտ-ել և կոխեր+տ-ել. «Ճարդել» բայից՝ ջարդ-ոտ-ել և ջարդ-
-ր+տ-ել բրոլորն էլ ջարդել. սղկել «ժանրել-փոշի դարձնել»
բայից՝ սղկ-ր+տ-ել բրոլորովին մանրել, փոշի դարձնել. սխմել
<սղմել բայից՝ սխմ-ր+տ-ել. նետ-ել բայից՝ նետ-ր+տ-ել. փետ-ել
բայից՝ փետ-ր+տ-ել. ամպել բայից՝ ամպ-որ+տ-ալ || ամպ-ր+տ-
-ալ, ճաքել բայից՝ ճք-ր+տ-ալ <*ճաքրտալ. ճղ-ալ բայից (ճղ-
դոկ, բարբառ)՝ ճղ-ր+տ-ալ «ճղղ-ճղղ ճայներ հանել». գունդ>
գունդ բառարմատից՝ գնտ-ել, գնտ-ր-ել և գնտ-ր+տ-ել. քերել ||
քեղ-ել բայից (եղդոկ, բըբ.)՝ քեղ-ր+տ-ել «քեր-քըր-ել». ճղ-ել
բայից՝ ճղ-ոտ-ել և ճղ-ր+տ-ել, այլև՝ ճղ-ր+տ-ովի՛ անել...

Այստեղ պետք է նշել՝ «ճղ-ր+տ-ովի՛ անել» (Նըբդ. բարբ.)
ձեր հետ միասին նաև ճղ-ոտ-ել բայաձենը, որն, իմ կարծիքով,
ստացված է՝ ճղ-ր+ոտ-ել ձեփց՝ «ըստ հոգնածանցի դրափոխու-
թյամբ, հետանցմամբ: Իսկ ճըրդ-ոտ-ել» բայաձենից կազմված է
«ճղ-ոտ-ուն» ածականը (Նըբդ. բարբ.):

Առհասարակ երա հնչյունը, թեկուղ և արմատական, վերևի
օրինակի նման, հեշտությամբ իր դիրքը փոխում, հետ է անց-
նում ինչպես բայերի, այսպիս էլ անունների մեջ, այսպիս օր՝
կազմերաց>կարպետ, կամուրջ>կարմու(ն)ջ, գատարկ>դարտակ>
դարդակ, սովորել>սորվել... և այլն¹:

Նույնը պետք է ասել պերծել և պեծել, որպես, իմ կարծիքով,
մեկը մյուսի սաստկական բայաձեների մասին: Կարելի՞ է

1 Տղա-մարդ=վրց. թամա-կացի մամա-կացի և կին-մարդ=վրց. ջջջա-յացո
դեպա-կացի բառերի մեջ, ըստ երևույթին, մարդ=վրց. յօյօ կացի բառը երկու
լեզվում էլ արտահայտել է ընդհանուր թե արտական և թե իդական սնաւ Հե-
տագայում է միայն, որ սա զարդացնում է արակ. սեփի զաղակարը: Այսօր
էկին-մարդը բառի տեղ հայերինում գործ է ածկում էկինարմատ», որն, իմ
կարծիքով, սկզբնական էկին-մարդը ձեփց է ծագում՝ հնչյունափոխությամբ,
այսպիս՝ կին-մարդ> կին-ա-մարդ>կին-ա-ր-մադ՝ «ըս-ի զբահախությամբ
>կինարմատ՝ «դ-ի խլացմամբ» Այսպես էլ՝ «կինկ-մարդ» ձեփց է ծագել հե-
տագա էկինկ-արմատ» ձեր՝ կինկ-մարդ>կինկ-ա-մարդ>կինկ-ա-ր-մադ>
կինկ-ա-ր-մատ. հնչյունափոխությամբ վրց. ջջջա-յացո դեպա-կացի էկին մարդը
բառեց էլ ստացվել Ե ջօյօ դիացի Կինարմա կամ կինկարմատ բառերի երկ-
բարդ մասը՝ արմատ կապ չպետք է ունենա արմատ տուանձին բառի հետ,
ինչպես ումանք կարծում են:

ԱՆԹԱՂՐԵԼ որ եղել են՝ կծ-որ-ել>^{*}կծ-ր-ել և ապա կնկնածանց՝ կծ-ր+ոտ-ել բայաձևերը, որոնցից արդին մեր սովորական կրծ-ել և կրկնածանց՝ կրծ-ոտ-ել բայաձևերը՝ «ը»-ի դրափիսությամբ ստացված, ինչպես այդ պարզ երևում է, վերևում բերված՝ աճ-դ-ր+տ-ելը կամ «կծ-ր+տ-ովի» անելը բայաձևերից ստացված՝ աճ-դ-ր-տ-ելը կամ «ճրդ-տ-ովի» անելը բայաձևերի մեջ:¹

Պետք է նշել նաև «կրճել» բայաձևը, որն, իմ կարծիքով, սկզբնական բայաձևը ստացված «կրծել» սաստկականի տարբերակը պետք է լինի (արմատական վերջանիչունի՝ ծ—ն տարբերակմամբ): Այս «կրճել» բայաձեն էլ իր տարբերակներով հանդերձ, անշուշտ, հետեւյալ անցումներն է կատարել՝ կծ-ել>կծ-ել>կծ-ր-ել>^{*}կծ-ր-ել կրծ-ել>կրճ-ել՝ սաստկածանց և կրծ-ոտ-ել>կրճ-ոտ-ել>կրճ-տ-ել՝ կրկնասաստկածանց բայաձևերը:²

Սրանք իմաստով էլ իհարկէ, որոշ երանգավորումներով միայն, նույնն են՝ բալորն էլ կապված լինելով արմատի համ կազ ռանեցող գործողության հետ: Վրց. յօֆ-օ կիծ-ի «ժանի», ատամ» բառն էլ հյ. «կիծ || կծել» բառի հետ, անշուշտ, նույնն է, որի կողքին վրացերենում կամ նաև՝ յհոյթ-օ կրեմ-այ «կրճ-ել» կամ յհոյթ-օ կրիճ-ա «ատամ», այլև՝ յօֆ-յօֆ-օ կած-կած-ի «ատամ-ատամի զարկել» և այլն:

Հստ իս, պլոկել» և ապոկել» բայերն էլ մեկը մյուսի սաստկական ձևերն են երևում: «Պոկել» բայի սաստկականն է՝ պլոկ-ոտ-ելը, այլև, թերեւս, պոկ-որ-ել>պոկ-ր-ել, ինչպես նաև կրկնածանց՝ պոկ-ր+ոտ-ել, այս նույն ձևերից ըրե-ի սովորական դրափիսությամբ կունենայինք՝ *պրոկ-ել, *պրոկ-ոտ-ել, իսկ սրանցից

¹ Այսպիսով, ուրեմն, կարելի է առել որ միջածանցը՝ հանդես գալով միմիայն արմատի մեջ, ինչպես այդ երևում է վերքում բերած մի քանի որինակներից էլ, մասնակիորապես հայերենում, առաջ եկած պետք է լինի լեզվի դարձացման հետագա աստիճանին, այն էլ սովորաբար վերջածանցներից՝ նրանց դրափիսության և նույնիսկ որոշ, գուցե և արգեն իր նախատիպի համեմատությամբ այլևս անձանաշելի զարձած, նիշյունափոխության շնորհիվ: Այսպես թէ այնպիս, միշտանցների ծագման ստուգաբանությունը, ինչպես կարծում եմ, պետք է որոնել հիմնականում վերջածանցների սառողաբանության մեջ:

² Վերջին բայենել՝ «կրճել», որ «կճ-ր-տ-ել» ձեից է ստացված՝ «ը»-ի դրափիսությամբ, երևում է նաև նրանից, որ «Բառգիրը Յաշխաբառակի կը բարառա» (1869, Վենետիկ)՝ ում հենց ուզդակի հիշատակված են (2-րդ սյունակ, էջ 7, տող 31-32): «կճ-ռ+տ-ել» կամ «կճ-ռ+տ-եցնել» ձեերը՝ «ը»-ածանցը դեռևս արմատի մեջ չանցած:

արդեն՝ պլոկ-ել, պլոկ-ոտ-ել բայաձեւը՝ թշ>լ փոխանցումով, որպիսի երեսոյթ կա նաև հետեւյալ բայաձեւըի մեջ՝ «դունդ» գուռնաւառապմատից կաղմված՝ զնտ-ել, գնտ-ր-ել> գնտ-լ-ել դարձյալ թշ>լ փոխանցումով. «ճընկ» բնաձայնից՝ ճնկ-լ+տ-ալ (Եվդոկի, բարբ. =ճընկ-ճընկ ձայներ հանել) <*Ճնկ-ր+տ-ալ ճնկից. «հըել» բայից՝ հլ-ոտ-ել <*հր-ոտ-ել ձեկից փոխանցված. «գունդ» բառից՝ գնդ-ո-իկ <*գնդ-ր-իկ և գնդ-լ-իկ <*գնդ-ր-իկ <*գնդ-ո-իկ ձեկից. «հաստ» բառից՝ հաստ-ո-իկ և հաստ-լ-իկ <հաստ-ր-իկ <*հաստ-որ-իկ՝ որ>թշ>ու || լ փոխանցորմով և այլն.¹

1 Այսուհեղ պես է հիշատակել, վերջապես, որ ակադեմիկոս Ղափանցյանը («Ընդհանուր լեզվոբանություն» հատ, 1-ին, Երևան, 1939, էջ 207—8, նմանապես ափելի շատ հրատարակված նրա «Մի քանի հնեաբանական մասցը ըստ հայերենում» հոդվածում, տ. Դիտ. և Արքիստի հնաստուսի Տեղեկադրություն, № 2, 1927 թ.) այս ու մասնիկը (ինչպես նաև ու մասնիկը, որ ես ցույց եմ տալիս վերեւում, անմիջապես շարունակելով) պատահական «ըստ կամ «ըստ հնչյունից» է համարում ծագած: Այսպիս օր՝ «... լազի զարդացման հասարակական պահանջով, — զրում է նա, — այդ «ըստ հնչյուններով» տարրերակները սկսում են ստանալ մի նոր, մեզ հարկավոր իմաստ, որի պահանջը կար, բայց մի ի բառաձևով չէր արտահայտվում, այս է՝ ավելի փաղաքշական բառեր, ինչպես՝ նեղիկ, կարծիկ կոկիկ շեղիկ, հաստիկ, բարալիկ (*<բարակիկ>*), սոթիկ, սուսլիկ և այլն՝ ուիկ (*<Ու+իկ* Ա. Մ.) նորաձեւ մասնիկով, և անարդական բառեր, ինչպես՝ հաստափի, հուշտոփի, հեփոփի, ցեթոփի, լոթոփի, կունդոփի և այլն՝ պիկ (*<Պ+իկ* Ա. Մ.) նորաձեւ մասնիկով: Ապա շարունակում է նա (Ա. ա., էջ 207—8) «Հնչյունի այդպիսի պատահական զոյացումն ու հավելացումը, ինչպես և զրա հետագա ձևաբանական օգտագործումը, որպիս մասնիկի, մենք հարկավ պիտի ունենանք և արմատի կամ բառարնի մեջ... ըստ իս, այդպիսի հնչյունական իննումնի միջածանցում (կամ ներածանցում) մենք պես է տեսնենք սովորական պիտի և ածանցյալ պլակի բայերի մեջ, ինչպես և բնդրութիւն և բնդրութիւն նման կազմությունների մեջ՝ թերեւ այլպիսի «ըստ հնչյուն ունենք և «կոր» բառի մեջ հանդիպ կործ-ի, ինչպես և գավառական տոլոր («սուլուր», «սուլուրիկ») հանդեպ սուր բառի: Բայց «ըստ մասնիկը, ինչպես երեւում է իմ բերած օրինտէկներից վերեւում, ծագում է «ըստ մասնիկի» հնչյունափոխությունից և, իմ կարծիքով, պատահական «ըստ հնչյունից ծագած չի կարող լինել ներկա ծագած լիներ պատահական հնչյունից, ինչպես ակտագիր: Ղափանցյանն է գրում, ըեզզի զարդացման հասարակական պահանջով... մի նոր մեզ հարկավոր իմաստա արտահայտելու, ապա առ միակ գնպը չպետք է լիներ, այլ այսպիսի իմաստային տարբերակում պետք է առաջ բերեին և ուրիշ պատահական (օր՝ «նու, ողի, տու» և այլն) հնչյուններ, ինչպես՝ մեծ >մենձ, քիթ >քինթ, կամուրջ >կարմունչ... ծանր > ծանդր, մանր > մանդր, սանր > սանդր, նողոպուր > նողոպուր, կալաս > կալաս և այլն (որտեղ իմաստային տարբերակում բնակ էլ առաջ չի եկած՝ այս զեպքում չն, «ըստ կ բորք որ, պատահական հնչյունների հավելացմբ»):

Այժմ ցույց տանք, սովորաբար -ու հոդնածանցին նախորդելին՝ որը հոգնածանցի ու-ի փոխանցման գեղքերը,¹ որ համեմատաբար ավելի շատ են?² Դրանցից են, օր՝ ճանկել—ճանկ-ու-տ-ել (կամ³ չանկ-ու-տ-ել ռչանգ արմատից), այստեղից ճանկ-ու-տ-ուք. չոք-ել—չոք-ու-տ-ել ռշարունակ ծնրադրելը. պադ-ել—պադ-ու-տ-ել. պչխ-ել Շփորելը—պչխ-ու-տ-ել Շփորփորել, քչփորել։ Ջոկել—ջոկ-ու-տ-ել Շռոլոն իրարից ջոկելը, սխմ-ել <⁴սղմ-ել—սխմ-ու-տ-ել Շշատ սեղմելը. սոթտ-ել Շքշտելը—սոթտ-ու-տ-ել Շտատկել—Շտատկ-ու-տ-ել. բայց նաև՝ Շտատկ-ու-տ-ել կամ Շտատկ-ու-ել, այստեղից՝ Շտատկ-ու-տ-ուք. (Փոթ-) Փոթ անել Ճամկի ծալ անել։ Փոթ-ու-տ-ել, բայց նաև՝ Փոթ-տ-ել. Չտկ-ել—Չտկ-ու-տ-ել Շռողել հարթել։ Ճաթ-ել—Ճաթ-ու-տ-ել՝ Շճաթել։ զժ-ալ Շզնքի արձագանք տալը—զժ-ու-տ-ալ, այստեղից՝ զժ-ու-տ-ուն Շորոտընդուստ, աղմկալից։ Վիթ-ել—Վիթ-ու-տ-ել (Պոլս. բարբ.) Շփետրատել, թերթելը պրկոտել։ Ժողով-ել՝ Ժողով-ել—Ժողով-ու-տ-ել բայց նաև՝ Ժողով-տ-ել կամ⁵ Ժողով-տ-ել՝ ավա արմատականի անկումով. Լափ-ել—Լափ-ու-տ-ել՝ լիփ-ու-տ-ել (Պոլս. բարբ.) Շանորոշ խոսել։ Լոխով-ել «կաղին քերծվել»—լոխով-ու-տ-ել. ճեղք-վել—ճեղք-ու-տ-վել. Խաբ-ել—խաբ-ու-տ-ել՝ խաբիքել։ Ճակ-ել—Ճակ-ու-տ-ել Շակ-ել—Շակ-ու-տ-ել կամ⁶ Ճակ-տ-ելք. կապ-ել—կապ-ու-տ-ել Շկապկալել, բայց նաև՝ կապ-ու-ել—կապ-տ-ու-ել. կծկ-ել—կծկ-ու-տ-ել Շկծկ-ու-տ-ել։ ճկ-ալ—ճկ-ու-տ-ալ, այստեղից՝ ճկ-ու-տ-ուք. Հտկ-ել—Հտկ-ու-տ-ել. ծվլ(ատ)ել («ծվլ-են» բառից)՝ ծվլ-ու-տ-ել.

¹ Աչ միայն «ըս հոգնածանցը, այլ նույնիսկ «ըս արմատական հնչյուննել երբեմն տու-ի մոտ ու է դասում, օր՝ Շփետուր» բառից Շփետը-ելը բայց ասոսկականն է՝ փետու-ալկ-ել՝ Շռոլոն էլ Շփետրիլ։ ոյլին՝ տաշ-ելլ լ տաշ-աշ-ել բայաձեկից՝ տաշ-աշ-պ-ել որին հնչյունափիսված ձեն է, ըստ երեւոյթին, «⁷տաշ-աշ-պ-ելը ձեից՝ տաշ-ա-ս-ել» շշ՝ արմատական հնչյունի անկումով և «ըս հոգնածանցի կոշացումով» բայց այս ու-ք-ու-թից փօխանցված հոգնածանցը չպետք է շփետիլ ևսու արմատից ստացված տու-ի հետ, օր՝ դետ-ու-ել՝ ⁸դետ-առ-ել Շփետից անցնելին՝ աչքը շուրը տանել։ զիժ-ու-ել <⁹զիժ-տ-ել ինչ-ու-ել և այլն։

² Այս ուր-ը+ս>rs>առ բազադրյալ հոգնածանցը ակադեմ. Մ. Աբեղյանը (Հայոց լեզվի անություն, Երևան, 1931. էջ 302) սխալմաք ստացված է համարում վինաւել, պատսել և պատսել բայաձեկից անարողիայով [վինաւ-ել, պատ-ել, պատու-ել բայերին բազարփելով տ ածանցը՝ վինաւ+տ-ել, պատ+ս-ել զամառ+տ-ել՝ արմատական ու հնչյունին հաջորդել է և ածանցը և ստացվել է, այսպես ասած, ուս հնչյունակոմպլիքսը, որին նմանությամբ, իբրև թե, կազմվել են մյուս ու+ս մտանիկավոր բոլոր բայաձեկը, որ, ինչպես տեսնում ենք, չիշա չէ։

այստեղից՝ ծվ-ուտ-ան, վաղ-ել—վաղ-ուտ-ել, այլև վաղ-վղ-ել—վաղ-վղ-ուտ-ել <*վաղ-վղ-ուտ-ել ձեից (ունենք վաղ-վղ-ուտ-ել ձեն ևս), այստեղից՝ վաղ-վղ-ուտ-ուց <*վաղ-վղ-ուտ-ուց ձեից և այլն.¹

Այս -ուտ բազմազրյալ հոգնակին կարող է կրկին -որ հոգնածանցով բարդվիր այսպես՞ուտ+որ, օր՝ ճանկ-ել—ճանկ-ուտ+որ կամ՝ չանգ-ու+թ-ել² և ապա՝ ճանկ-ու+տ+որ-ել կամ՝ չանգ-ու+տ+որ-ել || չանգ-ու+թ-որ-ել. գլ-ել—գլ-ր+տ-ել և ապա՝ գլ-ր+տ+որ-ել. ծղ-ող-ել³ «թելթել պատռտեր ճղել-քրքրել» և ապա՝ ծղ-ր+տ+որ-ել «ծվատել, պատռուտել». լափ-ել—լափ-ուտ-ել և ապա՝ լափ-ուտ+որ-ել, վաղ-ել—վաղ-ուտ-ել և ապա՝ վաղ-ուտ+որ-ել...⁴

¹ Մինչըստ ըստ ակադ. Ս. Արեգյանի (Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 302).՝ վաղ-վղ-ուտ-ել բայաձեւ ստացված է սփաղ-ելը բայի սկզբն վ բաղաձայնի կրկնությամբ, որը ոչ թե սկզբի բաղաձայնի կրկնությումը, այլ ինչպես տեսնում ենք, բայաբառափ կրկնությամբ և հնչյունափոխությամբ է ստացված՝ փող-վղ->վաղ-վղ- փոխանցումով:

² Հայն, ա>թ գիտանցումը պատահում է որոշ բարբառներում, օր՝ ամռել սասպիռով արորել լիտցըը բայի սաստկականը մի բարբառում ամռ-ամռ-ել է, մյուսում՝ ամռ-թ-ել, «մռ-ել» բայից՝ ճմռ-ս-ել և ճմռ-թ-ել» իսկ որանից՝ ճմռ-թ+ար-ել. «Ծծկել» բայից մի բարբառում՝ «Ծծկ-ս-ել», մյուսում՝ կծկ-թ-ել և այլն:

³ «Ծղ-ող-ել» բայը, ըստ իս, ծղ-ել ճղել» բայի սաստկականը պետք է լինի՝ որ (=ոլ) հոգնածանցի արակերպումով Արմառան է՝ ծղ=ճղ=ճմ (հմմա. ծղ-+տ+որ-ել). Այդ ծղ-ել (=ճղ-ել) ենթադրյալ բայի սաստկականը եղել է, ըստ երկույթին, «ծղ-ող-ել շշատ ճղել» > *ծղ-ոլ-ել > ծղ-ող-ել, ինչպես նաև՝ «իսան-ձել բայից՝ իսանձ-ող-ել=իսանձ-ու-ել» երկուսն էլ էկբել-մըրկել, չարաշար իսան-ձել՝ ըստ «Առնեռն-ի», որոնց՝ ոլ (<*ոլ<*որ)=ոլ՝ ածանցները իրար համազոր են: Մրանց միջին առջ ածանցը երբեմնի որ հավաքականի հնչյունափոխված ձեզ լինելով՝ ռատի (մշտական կամ աւական հատկության) գտղափար է արահայտում: Կարելի է ենթադրել, որ հյ. դեբրայական ռող» վերջավորությունն էլ նույն ձևով պետք է ծագեր նույն առջ երբեմնի հավաքականից՝ «որ» > *ոլ, փոխանցումով, ինչպես օր՝ խանձ-որ-ել > «խանձ-ս-ել» > «խանձ-ող-ել=խանձ-ող, ծղ-ող-ել > «ծղ-ոլ-ել > ծղ-ող-ել—ծղ-ող (=ճղ-ող), ճնղ-ող-ել > «բնղ-ոլ-ել > բն-ող-ել—բնղ-ող, այլև՝ կապկալ-որ-ել—կապկալ-ող. Ֆակծկ-որ-ել—ծակծկ-ող. ծամմմ-որ-ել—ծամմ-ծմ-ող. խանձնմձ-որ-ել—խանձնմձ-ող... և այլն.

⁴ Այստեղ պետք է նշել, որ ակադեմ. Ղափտնցյանը («Բներհանուր լեզվաբանություն», հատ. 1-ին, Երևան, 1939 թ., էջ 206) այս ու մասնիկը համարում է պատահական ռատ հնչյունից ծաղած, որ նախորդ ծանոթություններից մեկում էլ են հիշատակել և Մենք ունենք ճանկել, ճկել, հեալ և այլն բայերը, —զրում է նաև, —և տեսնում ենք, որ ու հնչյունից վերահավելմամբ գրյանում են նոր տարրերակներ՝ ճանկել, ճկել, հեպառ («Հեպառ») և այլն Այստեղ ըստ իս, ծագել է հնչյունաբանորեն և ոչ թե ռառնել՝ բայի արմատն է, ինչ-

Բայց պատահում է նաև, երբ -ու հոգնածանցին միայն -ոք հոգնակին է հաջորդում, այսպես օր՝ ճիլ-ել—ճիլ-տ-ել և ապա՝ ժիլ-տ+որ-ել. ճմո-ել—ճմո-տ-ել և ապա՝ ճմո-տ+որ-ել կամ՝ ճմո-թ-ել—ճմո-թ+որ-ել. պատո-ել—պատո-տ-ել և ապա՝ պատո-տ+ +որ-ել. գլել—զլ-տ-ել և ապա՝ զլ-տ+որ-ել բայց նաև՝ զլ-տ+թ+տ-ել՝ տու-ի կրկնությամբ,¹ ինչպես մենք այս տեսանք վերելում՝ հենց նույն գլելը բայց մեջ, որից՝ զլ-որ-ել—զլ-թ+տ-ել—զլ-թ+տ+որ-ել—զլ-տ+թ+տ+որ-ել և այլն:

Մյուս այլակերպությունը որ>ը հոգնածանցի շղանակն է՝ ու հոգնածանցից առաջ, այսինքն՝ երբ որւն նախորդում է տու-ին, օր՝ «խառն» բառից ունենք «խառնելը բայց, որի սաստկականն է՝ խառն-շ+տ-ել <*խառն-թ+տ-ել ձեից, ապա՝ խառն-շ+տ+կ-ել <*խառն+թ+տ+ակ-ել ձեից և խառն-շ+տ+որ-ել <*խառն-թ+տ+որ-ել ձեից. «ավելք» բառից՝ ավերել <ավերել (պոլահայ բարբառ), որի սաստկականն է ավր-շ+տ+կ-ել <*ավեր-թ+տ+կ-ել ձեից՝ «ավերել», քարութանք անելը նշանակությամբ. «ծուռ» բառից ունենք՝ ծոկել, իսկ արժատի կրկնությամբ՝ ծոմսել, որի սաստկականն է՝ ծոմո-տոտ-ել կամ ծոմո-թ+կ-ել <*ծոմո-թ+ակ-ել ձեից, այլ և սրա այլակերպությունը՝ ծոմշ-տ+կ-ել <*ծոմո-թ+ակ-ել ձեից. «կապը բառից՝ կապել իսկ արժատի կրկնությամբ՝ կապկապել, որի սաստկականն է՝ կապ-կ-շ+տ-ել <*կապ-կապ-շ+տ-ել <*կապկապ-թ+տ-ել ձեից. «պաղ» բառից՝ պաղել և սրա սաստկականը՝ պաղ-շ+կ-ել <*պաղ-թ+կ-ել ձեից և պաղ-շ+տ+կ-ել <*պաղ-թ+տ+ակ-ել ձեից. «փոխել» բայց արժատի կրկնությամբ՝ փոխ-

պահ սմանք են կարծում, և սաեղքած երկու տարբերակների մեջ սկզբում իւմաստական դիֆերենցիացիա չի նկատվում, այդ լինում է հետագայում լեզվի հայության պահանջման տեսակետից... ո մասնիկը որ առաջացած չէ առ || առնելը բառի հնչյունափոխությունից, այլ վաստ է: Բայց որ պատահական հնչյուն էլ չէ, այդ կարելի է անենել իմ բիրած վերելի օրինակներից և սուրբ բանությունից:

1 Եան դեպքեր, երբ միայն -ու հոգնածանցն է կրկնված՝ մանր-ել—մանր-տ-ել—մանր-թ+տ+ել բան-ել—բան-թ+տ-ել... և այլն, ինչպես բահանակների մեջ՝ գո-ալ—գո+ո-ալ վզ-ալ—վզ+դ-ալ վաղ-ել—վաղ-դ-ել... և այլն բարձաձայնների կրկնությամբ:

2 Խառնչտել բայց ակաղեմիկոս Ղափանցյանը («Ընդհանուր լեզվաբանություն», համ. 1-ին, Երևան, 1939, էջ 256) տարբորոշում է <խառն-թմշ-տ-ել ձեափ, որպէս ուզում է -ո (<-ր || որ) բայածանցըկապ ել ինչ որ-ընչ <-ունչ մասնիկ հետ, որն, իմ կարծիքով, ինչպես երեւմ է իմ բիրած հաջորդ մի շարք «ընդհանությունից, այլպես չել

փոխ-ել, իսկ որա սաստկականը՝ փոխ-փ-շ+տ-ել է <*փոխ-փիխ-շ+տ-ել <*փոխ-փոխ-ր+տ-ել ձեից, «փոր-ել» բայից արմատի կրկնությամբ՝ ունենք՝ փոր-փր-ել, որի սաստկականն է (պոլառհայ բարբ.) փոր-փ-շ+տ+կ-ել <*փոր-փր-ր+տ+կ-ել ձեից, «խլ-ել» || խլ-մ-ել» բայից՝ խլ-մ-շ+տ-ել <*խլ-մ-լ-ր+տ ել ձեից կամ խլ-մ-շ+տ+կ-ել <*խլ-մ-լ-ր+տ+կ-ել ձեից: Այսպես նուև հերելը և որպէս արմատի կրկնությամբ՝ «հր-մը-ել» բայի սաստկականները՝ հր-մը-տ-ել¹ <*հը-մը-տ-ել ձեից և հր-մշ-տ+կ-ել <*հը-մը-տ+կ-ել <*հը-մը-տ+ակ-ել ձեից:

Հետաքրքրականն է այստեղ բերել ափ «բուռ—ձեռքի ներսի կողմը» բառից տարբեր հոգնածանցներով կազմված բառաձեւքերը, որոնք իմաստի տարբեր երանգավորություններ են արտահայտում: Այդ «ափ» բառից ունենք՝ ափել քրանել, ձեռք գցել բայր, որից և իմաստի սաստկացմամբ ու երանգավորություններով՝ ափ-առ-ել, ափ-ո+տ-ել և ափ-ս-իլ <*ափ-զ-իլ ձեից ափս անել, գնալը կամ՝ ափ-շ-իլ <*ափ-ր-իլ <*ափ-որ-իլ ձեից՝ «նոր ոտք ելուղ մանկանց ձեռքով-ոտքով գնալ» բայաձեռերը, իսկ տրմատի կրկնությամբ՝ ափ-լափ-ել «խարխափել» կամ՝ հ-ափ-ափել բայց նաև՝ առանց արմատի կրկնության՝ հոգնածանցով՝ հ-ափ-ո-ել <*յ-ափ-ր-ել <*յ-ափ-որ-ել ձեից, նույն հոգնածանցով՝ ափլի-որ-ել, ապա առանց արմատի կրկնության, բայց նախորիվ կրկնածանցով՝ հ-ափ-շ+տ+ակ-ել <*յ-ափ-ր+տ+ակ-ել <*յ-ափ-որ+տ+ակ-ել ձեից և այլն:

Ինչպես վերեկի օրինակներից երևում է, թ > շ հոգնածանցին սովորաբար հաջորդում է տկ<տակ² բազալլյալ ածանցը, որը հաճախ ևած ձայնավորի սղմամբ է գործածվում, ինչպես օր՝ աճու-տկ-ել <*աճու-տակ-ել ձեից, լեզվ-ո+տկ-ել <*լեզվ-ո+մակ-ել ձեից, շտկ-ո+տկ-ել <*շտկ-ո+տակ-ել ձեից, սխմ-ո+տկ-ել <*սխմ-ո+տակ-ել ձեից, ամպ-ր-տկ-ել <*ամպ-ր-տակ-ել ձեից, վազվ-ո+.

¹ Այս այլակերպված բայաձեկից հետապայում, իմ կարծիքով, անշառվում է նրա երկրորդ մասը՝ «մատել» և գործ է ածվում, որպես առանձին բայ հերելը ու «ժշշել», ինչպես, օր՝ «ծուխ-մուխ», «ծխել-մխել» բառերից «մուխ», «միխել» ձեերը:

² Այս ածանցը՝ տակ, որ շատի գաղափար է տալիս, օր՝ կարմր-տա-տկ-ել շշատ կարմրել, ըստ իս, բարդ ածանց է՝ կազմված լինելով (ա)տ+կ ողբջ ածանցներից, քանի որ «ակ»-ով էլ առանձին բայաձեեր ունենք, օր՝ կուտ-ել —կուտ-ակ-ել խառն-ել —խառն-ակ-ել, տափ-ել —տափ-ակ-ել, կապտել —տկ-ել..., և այլն:

+ տիկել <*վազվղ-ո+տակել ձեից և այլն. թեև որոշ բառերի մեջ էլ պատահում է նաև անփոխով ձևով, ինչպես օրինակ՝ կարմր-ատակել, վայը-տակել, խախալ-տակել («Գեղը խախալտա-կեց... երեխին գտեք»), Պ. Պոլշ. «Կովածաղիկ»), Այս -ա)տակ > տկ ածանցը, ըստ իս, դործ է ածվում նաև անունների մեջ՝ իմաստի սաստկացման համար, օր.՝ երկ-տակ, եռ-տակ, հինգ-տակ, այլև՝ միշտակ, հիշ-տակ... և այլն:

§ 7. -Ո՞ և -ու հոգմակին «գիլ» և «կոր» բառաներում. Հայքնում հին բառերից են համարվում «գիլ» արմատից կազմված բառաները: Հնում դործ է ածվել նաև այդ «գիլ» արյատը որոշ դարձվածքներում, օր.՝ ի զիլ գալ «թակալվել», ի զիլ հանել «թավալնել», որոշ բարդություններում՝ մշտա-զիլ «միշտ գըլրտ-կող», թավա-զիլ-որ, այլև՝ գլ-ան, գլ-որ..., գիլը արմատից կա նաև զիլ բայր, որ նշանակում է «տակալացի» թակալիւ (զրական հայերնում դա այսօր դորձածական չէ): Սրա՝ պիկել բայր սաստկականն է, ըստ երեսոյթին, մեր այսօրվա զլ-որ-ի բայր «շատ թավալել զիլ-զիլ անել» նշանակությամբ:

Բարբառներում նույն պիկելը բայր զանազան ձևերում է հանգես գալիս՝ չնորհիվ մի շաբք հոգնածանցների բաղադրման, այսպես օր.՝ զլ-ել-զլ-որ-ել բայց նաև, զլ-ել <*զլ-ր-ել <*զլ-որ-ել ձեից, զլ-որ+տ-ել զլ-տ+որ-ել կամ՝ զլ-տ+ր-ել, զլ-տ+ր+տ-ել, զլ-տ+որ+տ+կ-ել <*զլ-տ+որ+տ+ակ-ել ձեից, զլ-որ+տ+կ-ել <*զլ-որ+տ+ակ-ել ձեից, զլ-որ+կ+ոտ-ել և այլն:

Ժողովրդական և արդի գրական հայերնում, սակայն, սովորական է «կոր»¹ բառը. իսկ շատ կոր ցույց տալու համար, ըստ իս, ավելանում է շատի գաղտփար արտահայտող -որ հոգնածանցը կոր+որ > *կր-որ > կր-որ («կոր» > կրցրտոի «ը»-ն զառնում է «ը»՝ չնորհիվ հետքն թաց գիսիմիլացիայի՝ «որ» հոգնածանցի աղղեցության տակ): Այստեղից արդեն՝ կր-որ-ել կամ կոր-որ-ել («կոր-որ» <*կոր-որ բառից) բայաձեռը, այլև՝ կր-ոլ-ել կամ կոլ-ոլ-ել [նախ «կոր-որ» բառի առաջին «ը»-ն «ը» է դառնում չնորհիվ հետքն թաց գիսիմիլացիայի, ապա՝ երկրորդ «ը»-ն էլ «ը» է դառնում ասիմիլացիայի չնորհիվ՝ գիսիմիլացիայի ենթարկված առաջին «ը»-ի ազդեցությամբ]... և այլն:

¹ Հ. «գիլ», «կոր» բառերն, ըստ երեսոյթին, նույնն են, ինչ որ վըս. հետեւալ բառերը՝ ցո՞ն(ցո՞ն-ո) զոր(-զոր-ի), ցո՞ն-ց զոր-վա «գիլ», զլոր, զլել զլորչել... և այլն:

ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ. Այստեղ կարելի է նշել նաև «ԺՄ-որել» բայաձելը, որի սաստիկականը «ԺՄ-որ+տ-ել կամ ժԺ-տ+որ-ել» է: Արմատը, ըստ երևոյթին, «ԺՄ» է, որի հետ, ըստ փս, նույնն է վրց. «Ժ-մ->ժխ», որից յօլ-օջ-օլ-օ մդ-ավ-իլ-ի «ԺՄ-որ», յօլ-յ՛ռ-օ մդ-եր-ա «հնչել» և այն նույն կարդի բառերից են, իմ կարծիքով, նաև կլոտ-որ>կոտ-ր>կոտ-ր, որոնց արմատն, ըստ երևոյթին, էկատ>կոտ» է՝ այսօր էլ պահպանված վրացերենում, ինչպիս օր՝ յօլ-յօ կոդ-վ՛տ «կտր-ել», Ե-յօլ-օ խե-կոդ-ա «ժառ-կտրիչ» ծառհատ=փայտատ թոշունը» կամ յօլ-յօ կոդ-ալ-ա=նույն «փայտատ» թըռ-չունը, այլև ասում են՝ յօլ-յօ կոդ-ավ-ս «կտրում կամ հատում է», Ց-յօլ-յօ մ-կոդ-ավի «կտրող, հատող... և այլն: Վրց: յօլ-յօ կոդ-վանշանակում է ոչ միայն ընդհան-րապես «կտրել», այլև «կրտել», այսինքն՝ «ամորձահա-տել», որի գաղափարը գրաբարում նույն «կտրել» բայով էր արտահայտում (ըստ իս՝ կտ-ր-ել>կրտ-ել ձեմ է փա-խանցել՝ «ը»՝ ի սովորական դրափոխությամբ):

§ 8. Աւի>վի>վ հագնակին որպես կրկնակրավորակերպ⁸ հիմնականում երկուսի փոխարքարակից⁹ ածանց. Անունների մեջ, ինչպես հայտնի է, գլխավորապես երկակի թվի, այն է՝ մարմնի զույգ անդամների կամ երկ-երկու իրարից անբաժան հանդես եկող առարկաների թվի գաղափարն արտահայտելու համար գործ է ածվել-ուի>վի հոգնածանցը, ինչպիս օր՝ ձեռ-ձեռ-վի, ոտ-ոտ-վի, դուռ-դու-վի, ինչպես նաև՝ «ակն» (եղ.) բառի հոգնակին էր գրաբարում՝ «աչ-ք», իսկ ժող. լեզվում՝ «աչ-եր» կամ «աչ-վի», ապա այստեղից՝ հրաչվի, սեաչվի ածա-կանները... և այլն: Այդ-ուի>վի>վ հոգնածանցը անունների մեջ, քացի առանձին արտահայտվելուց, հաճախ հանդես է գալիս նաև այլ հոգնածանցների համ բաղադրյալ՝ սովորաբար նախոր-դկելով նրանց, ինչպես, օր՝ աչ-վ+ն+եր, մատ-վ+ն+եր, ծնկ-վ+ն+եր, ոտ-վ+ն+եր... և այլն:

Անունների այս հոգնածանցը, իմ կարծիքով, հանդիս է գալիս նաև բայերի մեջ սովորաբար այլ՝ որ>ր>ր, տ... հոգ-նածանցներին բաղադրված և ցույց է տալիս գլխավորապես երկուսի փոխադարձ գործողությունը: Սա էլ՝ ատ-ի, -ոտ-ի, -տ-ի հոգնածանցների նման բարդությունների մեջ դրսերվում է առանց վերջին «ի» ձայնավորի՝ ուի>վի>վ փոխանցումով:

Այդ է պատճառը, որ նրա առանձին գործածության դեպ-

քերը շատ նվազ են, այն էլ սկզբնական՝ հոգնակի իմաստի որոշ մթադնումով կամ երանգավորումներով։ Այդ հաղվաղեալ գեղքերից կարելի է նշել, օր., «տիկ»¹ բառից վանի բարբառում եղել է ինչպես «տիկիլ», այսպիս էլ տիկ-վ-իլ տիկ-ո-իլ <*տիկ-ր-իլ <*տիկ-որ-ել ձերից, ալև՝ տիկ-ո+վ-իլ <*տիկ-որ+վ-իլ ձերից, իսկ տիկոր» բառից (Ղարաբ. բարբ.)՝ «տիկուվիլ» բայածերը (տես՝ Հ. Աճառ. Արմատ. բառ. տիկի բառի տակ), այսինքն՝ երկու գեղքում էլ շշատ՝ տիկ պես ուռչել նշանակությամբ։

Այսպիս նաև «ահ-իլ» բայից «ահ-առ-իլ» >ահ-ո-իլ բայի պատկանն է՝ ահո-վ-իլ «շատ վախենալ, սոսկալ», իսկ «ահր-իլ» բայից՝ ահր-վ-իլ (հոգնածանց) և կրկնածանց՝ զ-ահր-վ-իլ «շատ վախենալ, զարհուրիլ», աճու-ել «որորել» բայից՝ աճու-վ-իլ կամ աճու-տ+վ-իլ «սիրտը ցավից շատ տրորվել», «ապր-իլ» բայից՝ ապր-վ-իլ կամ ապր-տ+կ+վ-իլ («Արմատ. բառ.»-ից). «զլ-իլ» բայից՝ զլ-վ-իլ, «գով-իլ» բայից՝ գով-վ-իլ կամ զով-վ+տ-իլ և այլն։

Ինչ վերաբերում է նրա գործածության մյուս գեղքերին, դա արդեն, ինչպիս վերևում էլ նշեցինք, նրա այլ հոգնածանցների հետ բաղադրյալ հանդես դանի է, որ շատ սովորական երեւլույթ է։ Այժմ կտեսնենք, թե այդ՝ վ հոգնածանցը բայաձեւերի մեջ ինչ ձևով է ածանցվում այլ հոգնածանցներին։

Օրինակներ՝ 1. Երբ վ-ի հոգնակին նախորդում է ու հոգնածանցին, այսպիս օր.՝ «փոխ-ել» բայից՝ փոխ-վ+տ-ել «իրար հետ փոխել, փոխանակել», «ալագ-ել» բայից՝ ալագ-վ+տ-ել կարպագ-տ+վ-ել (Եվգոկիոն բարբ.) «իրար համբուրել», «ծեծել» բայից՝ ծեծ-վ+տ-ել կամ ծեծ-տ+վ-ել || ծեծ-վ+վ-ել (Եվգոկիոն բարբառ) «իրկու կողմեն իրար ծեծել», «ըզիկ» բառից՝ ըզի-վ+տ-ել կամ ըզկ-տ+վ-ել (Եվգոկիոն բարբ.) «չափազանց գրգովածությամբ ընդդիմախոսել մեկին, պոռալ, կանչտվել», «սիր-ել» բայից՝ սիր-վ-ել «իրար սիրել փայփայել», «շփ-ել» բայից՝ շփ-վ+տ-ել «իրանձըշփել», «քեր-ել» բայից՝ քեր-վ+տ-ել որի

¹ Ե՞՛տիկ» բառը, որ նախապես այծ է նշանակել (տես՝ «Արմատ. բառ.»), սրբիս ձեռ-իմաստային համարժեք, իբ սկզբնական իմաստով պահպանված է վրց. կամ ընդհանրապես քաբթվել. մի շաբթ բառաձեւերում, ինչպ. օր.՝ Ծոյ-օն-օ տիկ-ան-ի կամ ոյօ-օ բիկ-ան-ի բայթ-իկ», օն-Ծոյ-օ բա-տիկ-ի > բա-տիկ-ի տիկ տարեկան այժ-իկ», կամ օն-Ծոյ-օն-օ բա-տիկ-ան-ի բայթար-իկ, գառը և այլն։

կրավորականն է՝ քեր-վ+տ+վ-ել «իր մարմինը քորել», այստեղից՝ քեր-վ+տ-ուք. «կիս-ել» բայից՝ կիս-վ+տ-ել կամ կիս-վ-ել (նվազոկիո բարբ.) բան մը մեջերնին բաժանել, իրարում միջ կիսել. «բաժան-ել>բաժն-ել» բայից՝ բաժն-վ+տ-ել կամ բաժն-վ-ել (երդոկիո բարբառ) բան մը իրարում մեջ կիսել բաժանել. «քս-ել» բայից՝ քս-վ+տ-ել (Ակնա բարբ.) կամ քս-վ-ել «կատվի պես բարեկամություն կամ չնորհք վերստանալու նպատակով մոտենալ մեկին, խռովել. «Յակ-ել» բայից՝ թակ-վ+տ-ել կամ թակ-վ-ել (Նոր-Զուղայի բարբ.) «իրար թակել». «զզ-ել» բայից՝ զզ-վ+տ-ել «իրար զզգել» քաշշել-կովել, այստեղից՝ զզ-վ+տ-ուք. «հագ(ան)-ել» բայից՝ հագ-վ+տ-ել, այստեղից՝ հագ-վ+տ-ուք. «պահ-ել» փախ-ել բայից (պոլսահայ բարբ.) փախ-վ+տ-ել<^{*}պահ-վ+տ-ել այս ու այն անկյունում պահվել. «թք-ել» բայից՝ թք-վ+տ-ել. «Հոտ քաշել» բայից՝ հոտ-վ+տ-ել Շմեկին հոտոտել. «Խած(ան)-ել» բայից՝ խած-վ+տ-ել «իրար խածնել», բայց նաև՝ խած-վ+ռ+տ-ել...»

Այս վերջին՝ «Խած-վ+ռ+տ-ել» բայաձեկի նման՝ 2. երրորդի մասնիկը նախորդում է -ու+տ բաղադրյալ հոգնածանցին, ավելի շատ բայաձեկը են պատահում, ինչպ. օր՝ «քս-ել» բայից ունենք թե քս-վ+տ-ել և թե քս-վ+ռ+տ-ել, բայց նաև՝ քս-վ+ռ+տ+կ-ել<^{*}քս-վ+ռ+տ+ակ-ել ձեից, կրավորական՝ քս-վ+ռ+տ+վ-ել. «զզ-ել» բայից՝ թե զզ-վ+տ-ել և թե զզ-վ+ռ+տ-ել, բայց նաև՝ զզ-վ+ռ+տ+կ-ել. «Ճեծ-ել» բայից՝ թե ճեծ-վ+ռ+տ-ել, բայց նաև՝ ճեծ-վ+ռ+տ+կ-ել. «պագ-ել» բայից՝ թե պագ-վ+տ-ել և թե պագ-վ+ռ+տ-ել, բայց նաև՝ պագ-վ+ռ+տ+կ-ել.

Այսպես նաև՝ ճչ-ալ-ճչ-վ+ռ+տ-ալ, «ճինչ-ել» կամ ճնչ-ել-ճինչ-վ+ռ+տ-ել. կանչ-ել-կանչ-վ+ռ+տ-ել, այստեղից՝ կանչ-վ+ռ+տ-ան շատ պոռացող, պոռապոռացող. բաց-ել-բաց-վ+ռ+

¹ Խած-վ+ռ+տ-ել բայաձեկը, ինչպես նաև՝ կանչ-վ+ռ+տ-ել, ակաղեմ. Մ. Աբեղյանը (Հայոց լեզվի ահսություն, Երևան, 1931, էջ 302) սաացված է համարում վեպ-վ-ռ-տ-ելը բայաձեկի անլոգիայով, որտեղ ակաղեմ. Մ. Աբեղյանը շվանիկը մասնիկը սխալմամբ վվագ-ելը բայի սկզբի շվա բաշայնի կրկնությունն է համարում, և այսպիսով ստացվում է, եթե կարելի է ասել, վաս հնչյունակոմպլեքսը, որի նմանությունը կաղմվել են նաև մյուս -վ+ռ+տ բաղադրյալ մասնիկավոր բայերը: Ակաղեմ. Մ. Աբեղյանը, ինչպես երեսում է, վ բայածանցի և նրա՞ -ռը <ռւի երկակի թվի մասնիկի ծագման մասին պատկերացում չի ունեցել:

+ տ-ել, իսաշ-ել — իսաշ-վ+ո+տ-ել, բայց նաև՝ իսաշ-վ+ո+տ+կ-ել,
 խոս-ել — խոս-վ+ո+տ-ել, այստեղից՝ խոս-վ+ո+տ-ուք, կոխ-ել —
 կոխ-վ+ո+տ-ել, բայց նաև՝ առանց վ մասնիկի՝ կոխ-կ-ո+տ-
 -ել < կոխ-կի-ո+տ-ել ձեից, հաղ-ալ — հազ-վ+ո+տ-ալ, հաջ-ել —
 հաջ-վ+ո+տ-ել, լվ-ան-ալ — լվ-աց-վ+ո+տ-ել, բայց նաև՝ լվ-
 -աց-վ+ո+տ-ել, լիզ-ել > լզ-ել — լզ-վ+ո+տ-ել, բայց նաև՝ լզ-վ+ո+
 տ+կ-ել, եռ-ալ > կ-եռ-ալ < *կ-եռ-ա ձեից — կ-եռ-վ+ո+ա-ալ (Եվ-
 դոկիո բարը.) || կ-եռ-վ+ո+տ-ալ «չափազանց եռք զգալով՝ քեր-
 վտերու շարժումներ ընելը... և այն, ուի>վի>վ հոգնակին կա-
 րող է նաև միայն որ հոգնածանցին նախորդել, ինչպիս օր՝
 «պազել» բայից ունենք պագ-վ+որ-ել «իրար համբուրելը... և այն»

Ծանօթաւրյուն. — 1. Ընդհանրապես այս բայաձերում, որտեղ
 հանդես է դալիս ով մասնիկը, ինչպիս վերեւում մի շարք
 օրինակներից է երեւում, շատի զաղափարի հետ միասին
 մեծ մասամբ արտահայտված է նաև գործողության երկուսի
 միջև փոխադարձ կատարումը կամ էլ գործող անձը կրկնո-
 ղարար իր վրա ցույց տալով այս նույն գործողությունը
 Կործողության կատարման այս կարգի փոխադարձ զաղա-
 փարը, անշուշտ, բխում է (վի>) և մասնիկի արտահայտած
 երկակի թվի գագափարից¹, որի իմ աստի տարբեր երանդա-
 վորումներով պահպանված է զեռ այսօր էլ մեզ հետաքըլ-
 քող տարբեր բայաձերի մեջ։ Հիշյալ ուի>վի>վ հոգ-
 նակի մասնիկից, իմ կարծիքով, ծաղած պետք է լինի նաև
 մեր նոր գրական հայերենի կամ ընդհանրապես աշխարհա-
 բարի, այսպիս կոչված, կրավորական վ ածանցը։ Առ ևս
 երկուսի ենթակայի և խնդրի փոխադարձ գործողությունն
 է ցույց տալիս. խնդրի նկատմամբ կատարած կամ հա-
 տարելիք իր գործողությունը հնթական այս գեղըում
 արդեն նրանից կը ունի է իր վրա, ասենք՝ անում է ու արվում,
 շինում է ու շինվում, գրում է ու գրվում... և այն։
 Որ ուի>վի>վ կրավորական ածանցը ծագումով երկակի

1 Եվ ոչ թե ով կրավորական մասնիկի զաղափարից, որ կարելի է
 սիսալմամբ կտրել՝ աչքի առաջ ունենալով ով կրավորական մասնիկի պահ-
 պանած սկզբնական որոշ երկակի հատկանիշները. չէ՞ որ սա էլ՝ ով կրավ-
 րական մասնիկն էլ սառւզաբանորեն, ինչպիս կարծում ենք, ամենայն հավա-
 նականությամբ գալիս է նախապես երկակի թվի զաղափար արտահայտող
 վի>վ մասնիկից։

թվի պաղափար է արտահայտել, այդ մի այլ բանից էլ է երեսւմ։ Նա այսօր ոչ միայն սովորաբար անցողական բայցին է ածանցվում ու նրանց կրավորական դարձնում, այլ նաև որոշ անանցողական, այսինքն՝ չեղոք բայերին, ինչպ. օր՝ չի նստ-վ-ում։ Արտաքուստ առ՝ ևվա ածանցը կարծես թե մի ավելորդ բան լինի, գուցե և ոչ տեղին՝ պատահական գործածված։ Բայց նրա ծագումից ու կատարած զերից ենելով, դա, իրոք, պատահական չէ, երբ առում ենք «չի նստում», հասկանում ենք, որ մեկն իրեն կանգնած է պահում, չի նստում, իսկ «չի նստ-վ-ում» արտին ուրիշ է, որից սովորաբար հասկացվում է, որ չի լինում նստել, երկար՝ շատ նստել կամ բոլորովին նստել չի լինում, որովհետեւ մի երկրորդը նրան խանգարող կատ նմանապես և ներգործական սեռի բայերից, օր՝ չի ուտ-վ-ում սովորաբար ուտել չի լինում, չի խոս-վ-ում «խոսել չի լինում», չի գր-վ-ում «գրել չի լինում», չի կարդաց-վ-ում «կարդալ չի լինում... և այլն։

Մանորուրյան. — 2. Հայերեն ուհի >վի>վ մասնիկն իր սկզբնական հոգնակի իմաստով բայաձեներում առանձին, ինչպես այդ պատահում է դեռ ևս որոշ անունների մեջ, սովորաբար չի հանդիպում։ Մեծ մասամբ նա հանդես է գալիս այլ հոգնածանցների հետ բաղադրյալ՝ միշտ էլ նախորդելով նրանց, օր՝ քս-վ+ըտ-ել, կոխ-վ+ըտ-ել, պադ-վ+որ-ել, իւած-վ+տ-ել... և այլն, իսկ առանձին գործածվելիս կամ այլ հոգնածանցներին հետնորդելիս՝ սովորաբար կրավորականի իմաստ է արտահայտում, օր՝ գր-վ-ել, գր-ոտ-վ-ել, քս-վոտ-վ-ել... և այլն։

Մանորուրյան. — 3. Հնում գործածված, գրաբարում մուտք գործած, օր՝ «կալ-ու-ած» բայաձեկի մեջ, որ, անշուշտ, կալ—կալ-ու սկզբնական երկակի կամ հոգնակի ձևից պետք է ծագած լինի, սկզբից էլ, ըստ երեսույթին; որոշ կարգի ժոխադարձ գործողություն կամ հարաբերություն պետք է դրսկորված լինի, այսպես ասած, կալոդի՝ որպես գործող անձի և կալածի՝ որպես կրող խնդրի, այսինքն՝ երկուսի միջև, այսպես նաև՝ հատ-ու-ած--հատոդի և հատածի միջե, բեր-ու-ած--բերոդի և բերածի միջե, ստաց-ու-ած--ստացոդի և ստացածի միջե... Սրանց նման նաև որոշ կարգի բառաձեռք, օր՝ «համբուր-ու-ել», այսուղ էլ նույն երկուսի

կորիադարձ դործողության գաղափարը կա' համբուրողի և համբուրվողի՝ ու մասնիկով արտահայտված, այսպիս նաև գրկ-ու-ել, գրկախառն-ու-ել, միավոր-ու-ել, համաձայն-ու-ել... խած-ու+տ-ու-ել «իրար խածնել», գզ-ու+տ-ու-ել «իրար գզել», խոս-ու+տ-ու-ել «իրար հնտ խոսել»... և այլն:

§ 9. Ք և ի-կ եզրակիմերթ իրար համազոր քայածանցներ, և ն-ի եզրակիմ.

Անունների սովորական հոգնակին գրաբարում կտղմվում էր չ մասնիկով, մի բառը միայն -ի-կ-ով՝ մարդուկի, Այս նույն հոգնակի մասնիկը, ինչպես օր՝ հետեւյալ անունների մեջ՝ զյուղացի-ք, ձայն-ք, աղքատ-ք և այլն, մեզ հանդիպում է նաև բայաձեւերի մեջ, այսպես օր՝ ծեծ-ել—ծեծ-ք-ել կամ ծեծ-կ-ել շատ ծեծելը, ծծ-ել—ծծ-ք-ել, ձայն-ել—ձայն-ք-ել, ճպու-ել «պոկել»—ճպու-կ-ել, գել տալ—գել-ք-ել, ճմու-ել—ճմու-ք-ել, այլև՝ ճմու-տ-ել, գճ-ի «ճճռաղբել»—գճ-կ-ի, բոլոր-ել «ծածկել»—բոլոր-կ-ել < *բոլոր-կ-ել ձեից, այլև՝ բոլոր-տ-ել, փլիլ-ել—փլիլ-կ-ել (Պոլս. բարբ. «զանազան տեղերից փուլ գալ»), պտտու-ել—պտտու-կ-ել, չարչար-ել—չարչք-կ-ել, աճու-ել «տրորել»—աճու-կ-ել այլև՝ աճու-տ-ել, ցրցն-ել < *ցիրուցան-ել ձեից—ցրցն-ք-ել < *ցիրուցան-ք-ել ձեից-փրթ-ել—փրթ-կ-ել (Պոլսահայ բարբ.) «թելերը փրթի», դուրս դալը, իսկ կրկնածանցներով՝ ծախ-ել—ծախ-կ+ու+տ-ել, ծեծ-ել—ծեծ-կ-ել և ծեծ-կ-ել և ծեծ-կ+ու+տ-ել, կոխ-ել—կոխ-կ+տ-ել—կոխ-կ+ու+տ+ել²—կոխ-կ+ու+տ+կ-ել < *կոխ-կ+ր+տ+ակ: ել ձեից, քաշ-ել—քաշ-կ+ու+տ-ել, այսահեղից՝ քաշ-կ+ու+տ-ուկ—քաշ-կ+ու+տ+կ-ել < *քաշ-կ+ր+տ+ակ-ել ձեից, բղտ-ել—բղտ-ու+կ-ել, այլև՝ բղտ-ել—բղտ-ու+կ-ել, այլև՝ բղտ-

¹ Վ. բացերենում հյ. «աղքատ» բառը ձևաց-օ ալֆատ-ի ձեռք կա, բայց ավելի շատ գործ է ածվում Ծածաց-օ գատակ-ի բառը՝ նույն նշանակությամբ: Սրանք, ըստ իս, իրար հնչյունափոխված ձեռքն են՝ ա-ղքատ > *զաքատ՝ «զք» հնչյունների աբանքում «ա»-ն է ընկիլ > *զատաք՝ «ք» և «տ» հնչյուններն իրենց աեզերը փոխելով > *զատակ=զբց. Ծածաց-օ դատակ-ի, ինչպես օր՝ հնչյունների նման շըշումով՝ հյ. բանակի > բալանի, մանգաղ > զբց. նամազ-օ նամզալ-ի, մարզ > զբց. մանրակ > զբց. մուրեակ > զբց. մյանհաց-օ մուհարակ-ի և այլն:

² Քաշ-կոտ-ել և կոխ-կոտ-ել բայտձեռքի մեջ ակտղեմ: Մ. Աբեղյանը (Հայոց լեզվի անություն, Երևան, 1981. էջ 302) կոտ < կ+ու+տ բազարյալ ածանցիք կ մասնիկը սխալմամբ բայարմատի սկզբի բաղանայի կրկնությունն է համարում, որ, ինչպես տեսնում ենք, այդպես չէ:

առ+տ~ել, ճոճ~ել—ճոճ~կ+տ~ալ, այստեղից՝ ճոճ~կ+տ~ան, տապալ~ել—տապլ~կ+տ~ալ, այլէ՝ տապլ~տ+կ~ել<*տապալ~տ+ակ~ել ձերից, կարմր~ել—կարմր~տ+կ~ել, երեր~ալ—երեր~տ+կ~ել, ծուռ~ել—ծուռ~տ+կ~ել, փախ~չ~ել—փախօչ~տ+կ~ել (Պոլս. բարբ.) ևայս ու այն կողմ փախչել, այլէ՝ փախ~չ~ո~ն+տ+կ~ել, փնտր~ել—փնտր~տ+կ~ել (Պոլս. բարբ.), ևայս ու այն կողմ որոնել, ճմռ~ել—ճմռ~տ+կ~ել> ճմռ~թ+կ~ել.. նետ~ել—նետ~ո+տ+կ~ել (Պոլս. բարբ.) ևայս ու այն կողմ նետել, շտկ~ել—շտկ~ո+տ+ +կ~ել, փեթ~ել—փեթ~ո+տ+կ~ել (Պոլս. բարբ.) «փետրել-պոպկել»՝ «փետրելը բայից, փակ~ել—փակ~ո+տ+կ~ել (Պոլս. բարբ.)» միւ~ -ալ՝ «մուխ» բառից—միւ~ր+կ+տ~ալ, հեծելտհառաչել, ախ քաջել— հեծ~կ+լ+տ~ալ<հեծ~կ+ր+տ~ալ ձերից՝ «հեծեկեկալ», խած~ել—խած~կ+տ~ել, ծիս~ալ—ծիս~թ+կ+տ~ալ ևանդադար ծուխ արձակելը, ժաժ զալ—ժաժ~կ+լ+տ~ել<«ժաժ~կ+ր+տ~ել ձերից, այլէ՝ ժաժ~կ+տ~ել ջղ(ը) ջղը~ալ «թրջվել»—ջղըջրեան+ուտ~ել շշատ թըրջ~վել, «պոռւնկ» բառից՝ պոռնկ~ն+ուտ~ալ շշատ տղերս~ել, թախանձել, հարց(-ն)~ել—հարց~ֆ+ն+տ~ել—հարց~վ+ն+տ~ել— հարց~վ+ն+ք+տ~ել։ և այլն։

Նի>ն հոգնակին կարող է առանձին էլ հանգես զալ բայի մեջ, ինչպ. օր՝ բզզ~ն~ել կամ զզզ~ն~ել շշատ հնանալ կամ շատ պատառուվել քրքրվել, այստեղից՝ բզզ~ն~ած կամ զզզ~ն~ած շշատ հնացած և անհեծ՝ «ոչ բզզ~ն~ես», այստեղ «զ» հնչյունի կրկնությամբ էլ է իմաստը սաստկացած՝ բզզնած։ Այսպես և հետևյալ բայաձների մեջ՝ զվո~ն~ել, որի համազորն է՝ զվո~տ~ել ևայստեղ~այնտեղ շրջել, պտտելը բայաձել (նի>ն=տ) և այլն։

§ 10. Զ>ս հետադիրը՝ ինտենսիվարյան բառածանց. Դրաբարի զ>ս նախդիրը, ինչպես հայտնի է, նախազրվելով հայցական հոլովով անվան վրա՝ կոնկրետացնում է նրան։ Նա ոչ միայն կարող է կոնկրետացնել, այլէ՝ բառի իմաստը սաստկացնել, ինչպ. օր՝ «ամպ» բառից՝ զ~ամպ, իսկ «ամպել» բայից՝ զ~ամպել. «արմանք» բառից՝ զ~արմանք, իսկ «արմանալ» բայից՝ զ~արմանալ. «ահ~ահ~որ~ել» («ահ» բառարմատի կրկնությամբ և որ հոգնածանցով) բայից՝ զ~ահ~ահ~որ~ել շշատ վախենալ, զարհուրել։ «թափել» բայից՝ ս~թափել և այլն։

Պատահում է, որ նույն զ>ս մասնիկը, ըստ իս, բառաբառաւի վերջից էլ է ածանցվում, օր՝ «տիկ» բառից՝ տկ~զ~ել շշատ ուռել, տկի պես դառնալ, բայց նաև՝ տկ~ո~ել<*տկ~ը~ել <*տկ~որ~ել ձերից, այստեղից՝ տկ~ո~ան. լեպել ռկախարդիչ

խոսքերով համոզելը բայից՝ լիպ-ս+տ-ել (=կրկ. լիպել). թլու-
րել՝ հնամողելով՝ լոլոչելով խաբելը բայից՝ թլ-ս+որ-ել (կրկնա-
ծանց). տամուկը բառից՝ տմկ-ել տամկանալ, խոնավանալը և
և տմ-ս+կ-ել>⁶տմկ-ս-ել ձեից՝ շատ թրջվելը... և այլն:

§ 11. Ան, Են<եան երեմնի հավաքականներն այսօր. Այս-
աժանցները, որպես հատկության կամ տեսականության երբեմնի-
հոգնածանցներ, այսօր համեմատաբար շատ թույլ են դրսնորուն-
իրենց սկզբնական հոգնակի իմաստը:

Մրանք գրաբարում գործ են ածվել որոշ բայերի այնպիսի
ժամանակներում, որոնց բնորոշը գործողության տեսականու-
թյունն է, այսինքն՝ գործողությունը սկսված, բայց վերջացած
չէ, օր՝⁷ ներկայում, անցյալ-անկատաբարում և այլն, իսկ անցյալ
կտտարյալում արդեն նրանք զուրս են ընկել²:

Մրանք այնպիսի կենսունակ ածանցներից չեն, ինչպիս-
որինակ՝ դեռ այսօր էլ-առ-ի, -ոտ-ի, -ու-ի և այլ նման կեր-
պածանցներն են Բատ երեւութիւն, սրանք ավելի հին ու իրենց.
սկզբնական իմաստը մթազնած ածանցներ են, որոնք անուննե-

¹ «թլ-որ-ել» բայը, իմ կարծիքսվ, *ալ-որ-ել<⁸որ-որ-ել ձեկ հնչու-
նափոխությունից պետք է լինի ստացված. բայտրման անշուշտ ուլ-ւ է, որ
կո ու-ել վիաբել բայից մեջ, որից՝ որ հավաքականով⁹*ոլ-որ-ել>¹⁰ալ-որ-ել>
թլ-որ-ել ևերկար համոզելով խաբել. ապա սրանից՝ *թլ-որ+ս-ել>թլ-ս+որ-
ել՝ ուս սաստկականի դրտփոխությամբ. Այս ս ածանցը, իմ կարծիքով, նույն
զ մտանիկի հնչյանային տարբերակն է և պահպանված է գրաբար հայցա-
կան հոգնակի ձևերում, ինչպես զ նախզիրը՝ ընդհանրապես հայցական կոնկ-
րետացված ձևերում. այսպես օր՝¹¹ քաղաք-ս || զ-քաղաք-ս... և այլն:

² Մրանց, ըստ իս, շատ նման է նաև չը բայածանցը, օր՝¹² փախ-չ-իմ—
փախ-եայ, որ բայածերի մեջ առանձին քիչ է գործածվում, օր՝¹³ հնալ-ելը
բայից՝ հալ-չ-ել=հալ-վ-ել, այլ ավելի շուրջ ուրիշ կերպածանցների հնա բա-
յադրյալ է հանդիս դալիս, օր՝¹⁴ էկոխ-ել-կոխ-կ+ո+տ-ելը բայածերի կող-
քին նաև՝ կոխ-չ+ո+տ-ել, կոչ-չ+որ-ել <¹⁵կոխ-չ+որ-ել ձեկից. վկիալ բառից՝
կո-չ-չ-ել, կո-չ-չ+տ-ել կո-ո-չ+կ-ել օօձիքին փակչելով՝ շատ խնդրնել. Փախ»
բառարմատից՝ փախ-չ-ել, փախ-չ+տ-ել, փախ-չ+ո+տ-ել. «թիու բառարմ-
ատից՝ թո-չ-ել թո-չ+տ-ել, թո-չ+կ+ոտ-ել. «կո-ալը բայից՝ կո-չ-ալ էկոռ-
կըռալ. տնո-ել տարօքելը բայից՝ աճո-ն+որ-ել շատ տրոքելուց փշացնելը:
Նաև «փափար» բառից՝ խավար-չ+տ-ին կամ՝ խավար-տ+չ-ին..: և այլն: Առ,
իմ կարծիքով, սատցված պետք է լինի չիչ ածանցից, որ այսօր էլ սափորա-
կան է անունների մեջ, որպես սովորաբար «մի բան կատարող» ածանց,
պիցուզ, թե եղել է՝ հալ-իչ, որից, *հալ-իչ-ել>հալ-չ-ել, *ոսոս-իչ>¹⁶ոսոս-իչ-
ել>սաս-չ-ել, կո-իչ>¹⁷կո-իչ-ել>կո-չ-ել... և այլն:

րի -ան¹ և -հան հոգնածանցներից պետք է ծագած լինեն անունների մեջ, օր՝ ձի - ձի - ան, էջ - էջ - ան, էշ - իշ - ան կամ իշ - ան, խող - խող - ան, նախարար - նախարար - ան... և այլն:

Համեմատարար ավելի կենսունակի է - ան ածանցը բայերի մեջ². սա աշխարհաբարում գլխավորապես տնուններից բայ է շինում և ցույց է տալիս գործողության տևականություն, պրցես, մի վիճակից մյուսին տնօնելը. օր՝ ունենք «ձի» բարից՝ ձի - ան «ձիեր», որից և՝ ձի - ան - ալ «ձի» դառնալը՝ մի վիճակից մյուսին անցնելով. այսպես նաև՝ էշ - իշ - ան - ալ, երկար - երկար - ան - ալ, կարճ - կարճ - ան - ալ, եղբայր - եղբայր - ան - ալ, մի - մի - ան - ալ, լի - լի - ան - ալ, այլև՝ են <*-հան հոգնածանցով մոտ - մոտ - են - ալ, մերճ - մերճ - են - ալ... և այլն:

Հետաքրքրական է, որ զբարարում նույն բայի կրկնակի ձեւերը կան, մեկը սովորական, իսկ մյուսն, ըստ երեսութին, ավելի տևականություն ցույց տվող ձեւեր, ինչպես օր՝ «անձկամ - անձկան - ամ, ցանկամ - ցանկ - ան - ամ, զղջամ - զղջ - ան - ամ, փութամ - փութ - ան - ամ, մուրամ - մուր - ան - ամ, տենչամ - տենչ - ան - ամ, խրխտամ - խրխտանամ, սողամ - սողանամ, ծուլամ - ծուլանամ, երթամ - երթանամ... մերկեմ - մերկանեմ, տարածեմ - տարածանամ... ներկեմ - ներկանեմ, զատեմ - զատանեմ, զանգեմ - զանգանեմ, բեկեմ - բեկանեմ, հերձեմ - հերձանեմ, դիզեմ - դիզանեմ, կիզեմ - կիզանեմ, ստեղեմ - ստեղծանեմ, թքեմ - թքանեմ, եղծեմ - եղծանեմ..., հերձիմ - հերձանիմ, զերծիմ - զերծանիմ, այլև՝ են ածանցով՝ արբիմ - արբենամ, մոտիմ - մոտենամ, մերձիմ - մերձենամ, պարծիմ - պարծենամ... և այլն:

Այսպիսով - ան ածանցի առանձնահատկությունը, ինչպես

¹ Կարող է նաև -անի հոգնածանցից էլ ծագած լինի՝ վերջին չի ձայնավորի անկումով, օր՝ մեծ - մեծ - անի - մեծ - ան - ալ, ավագ - ավագ - անի - ավագ - ան - ալ, աղքատ - աղքատ - անի - աղքատ - ան - ալ, կրակ - կրակ - անի - կրակ - ան - ալ... և այլն:

² Ան նույն հոգնածանցն է, անդուշտ, որ հետազյում էլ շնորհիվ իր բառաստեղծական դերի՝ բայարմատներից՝ երեխնի բառարմատներից նաև այս կամ այն բանից մշտական կամ տևական հատկություն ունեցող ածականներ է կազմում, օր՝ «հաշ» բառարմատից՝ հաշ - ան և իշ՝ հաջող՝ շուն, ինչպես նաև՝ կծ - ան, փշ - ան, հոս - ան... և այլն:

արդեն ասացի, տևականությամ, պրոցես (մի վիճակից մյուսին անցնել) ցույց տալն է, որն այժմ արդեն հիմնականում մթագնած լինելով՝ այլևս պարզ չի երևում որոշ բայաձեռի մեջ։ Այդպես է ահա գլխավորապես գրաբարից աշխարհաբարին անցած բայերի մեջ, որտեղ այսօր այդ ածանցի ձեական փոփոխությունն էլ է կատարված՝ ան>ն փոխանցումով, ինչպ. օր՝ հաս-ան-ել>հաս-ն-ել, տես-ան-ել>տես-ն-ել, դատ-ան-ել>դատ-ն-ել, մեռ-ան-ել>մեռ-ն-ել... և այլն [այսպես չէ, սակայն, աշխարհաբարում ռանդ ածանցով անուններից բայ կազմելու ժամանակ, երբ պարզ երևում է ավյալ ածանցի, վերեւում արդեն հրշատակած, առանձնահատկությունը...]:

Հատկանշական է, որ այդ՝ ան>ն ածանցը ընդհանրապես հանդես է գալիս բայի այնպիսի ժամանակներում, օր՝ ներկա, անցյալ-անկատար.., և այլն, որտեղ գործողությունը կատարված չէ, մեծ մասամբ ոկտած, բայց վերջացած չէ, մինչդեռ անցյալ-կատարյալում, վաղակատարում և հարակատարում, որտեղ գործողությունը կատարված՝ վերջացած է, նա սովորաբար, ինչպես օր՝ մի կողմից ունենք՝ տես-ն-ում եմ (էի), տես-ն-եմ. հաս-ն-ում եմ (էի), հաս-ն-եմ. դատ-ն-ում եմ (էի), դատ-ն-եմ. մեռ-ն-ում եմ (էի), մեռ-ն-եմ, և մյուս կողմից՝ տես-ա, տես-ել եմ (էի), տես-ած եմ (էի). հաս-ա, հաս-ել եմ (էի), հաս-ած եմ (էի). դատ-ա, դատ-ել եմ (էի), դատ-ած եմ (էի), մեռ-ա, մեռ-ել եմ (էի)... և այլն:

Ծանոթություն.—Անհրաժեշտ է այստեղ, վերջապես, նշել, որ հայոց որոշ բայածանցների ղըսկորած գործողության կըկնությունը, որպես լիզվական երեւյթ, այս կամ այն չափով, զիտված է մեր քերականների և լիզվարանների կողմից,

¹ Նման երեւյթ, իմ կարծիքով, կա նաև վրացերենում, որտեղ, ընչպես հայանի է, անունների հոդակի մասնիկն է ցծ-եր, օր՝ Եց խե Շառա, իսկ Եց-ցծ-օ խե-եր-ի Շառ-երու։ Այս նույն-ցծ-եր մասնիկը, ըստ իս, հանդես է գալիս նաև ներկա և ներկայի բնից կազմվող մի շարք բայաձեռի մեջ, որտեղ գործողությունը տեսական է, ավարտված չէ, իսկ անցյալ կատարյալոց և նրա բնից կազմված նույն բայաձեռից, որտեղ գործողությունը տեսական չէ, այդ մասնիկը դւբս է ընկնում։ Սա էլ, հյ. Հան-ի նման, պլավորապես անուններից բայ է շինում և այսպիսով սկզբնական հոդակերտական գաղափարից երկրորդական բռաստեղծական դաղափարի է անցնում՝ անուններից կամ բռարմատներից բայաձեռել կազմելով։

ինարկե, չցույց տպլով բայածանցների ծաղման աղբյուրը՝ նրանց ձևափոխություններն ու իմաստային երանդավորումները։ Այսպես օր՝ զեռնս Այտընյանի մոտ կարդում ենք (Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866. էջ 303)՝ «Բանի մը մասնիկներ ալ բայերու հատուկ են, որոնք հասարակութեն գործողության մանր կրկնություն, անընդհատ տեսդություն և այլն կցուցնեն, զորօրինակ՝ թռչիլ, թռչտիլ, կտրել, կտրտել (հին՝ կտրատել), պատռել, պատռուել (հին՝ պատառուել). խոցել, խոցանել (հին ոմկ. խոցտել), կոտրել կոտրտել (հին՝ կոտրատել), կըճել, կըճտել, կովիլ կովտել, չարչարել, չարչըկել, նույնպես ալ՝ զլորտիկել, ավրշուկել, պաղջուկել, փոնգտուլ, ձգտիլ, խածատել, բզբքտել ճանկուտել, քաշկուտել, պոռչուտալ, կանչվբռտել, լզվըռտիլ, վազվըռտել և այլն»։ Բացի այս տեղեկությունից ուրիշ ոչ մի բան չենք գտնում Այտընյանի քերականության մեջ հիշյալ բայածանցների մասին։ Նույնը նաև Պալասանյանի քերականության մեջ (Քերակ. մայր. լեզվի, Չորր. տիպ, 1894. էջ 147—8) ըստ, ու մասնիկները, որ ցույց են տալիս գործողության մանր կրկնությունը կամ թե գործողությունը, որ շատ միատեսակ առարկաների վրա է կատարվում. ըսնուտել, մորթուտել, կոտրտել կտրտել։ Ակաղեմիկոս Աբեղյանի քերակ. դասագրքի մեջ էլ (Աշխարհաբարի քերակ. Վաղարշ. 1906. էջ 96) կարդում ենք՝ «Բազմապատկական միջածանցները՝ տտ, ոտտ, ու դրվելով ել լծորդությունից առաջ՝ կազմում են բազմապատկական բայեր, որոնք ցույց են տալիս եղելության կրկնություն կամ բազմապատկություն, այսինքն՝ շատ անդամ կատարելը կամ շատ անձի կատարելը (§ 196. 2), ինչպես նաև՝ նույն հեղինակի էլ. լեզվի տեսության զըքում (Երևան, 1931. էջ 302)՝ «Բազմապատկական բայերը ցույց են տալիս գործողության կրկնություն, կամ շատ գործող առարկաների միանման գործողություն։ Կազմվում են եւլ վերջածած բայերից տտ, ոտտ, տտ, որ, ատակ, տիկ և ուրիշ ածանցներով, ինչպես՝ կտրել — կտրատել, կտրտել, կոտրել — կոտրատել, կոտրտել, կոտորել — կոտորտել, փշել — փշտել, փշտել — փշտել.. կովել — կովտել, պահվել — պահվտել, պազվել — պազտվել, պտռել —

պառաւել. փնտուել — փնտուտել. պատառել — պատառտել. պատուտել. ճանկել — ճանկաւել Այս վերջինների անալոգիայով^(*) ստ¹ մասնիկով՝ քանդել — քանդուել խաբել — խարստել. սկզբի բաղաձայնի կրկնությամբ^(*) վաղվատել, քաշկուտել, կոխակուտել: «Վաղվատել» բայի անալոգիայով^(*) խածվատել, կանչվատել²: Կրկնականների մեջ ու, ու մասնիկով՝ խաբիքել — խաբիքաւել. պաշաչել — պաշաչորել. ծակել — ծակծկորել, ծակծկուտել. ծամծմել — ծամծմուտել. ծամծմորել: Ատակ, տկ, մասնիկներով՝ փայլել — փայլատակել, փայլկտալ, կարմրել — կարմրատակել, կարմրտկել. ոլորել — ոլորտկել, ավրել — ավրշտկել և այլն: Այսպես նաև մեր այսօրվա գպրոցական քերականության մեջ (Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, Զորբ. հրատ. Երևան, 1939. էջ 216—17): «Բայի կերպերը» վերնագրի տակ (§ 10²), որտեղ կարդում ենք՝ «Երբ բայն ստանում է «ատ», «տո», «տ», «կոտ» և նման ածանցներ և ցույց է տալիս, որ ենթական գործողությունը կատարում է Բաղմապատիկ (շատ) անգամ, ապա նա գառնում է բազմապատկական կերպի բայ, օրինակ՝ ցատկուտել թոշկուտել կտրատել մորթուտել» (էջ 217): Այսպես նաև ակաղեմիկոս Ղափանցյանը, որի մոտ («Ընդհանուր լեզվաբանություն», հատ. 1-ին, Երևան, 1939. էջ 255—6) կար-

1 Այս ստ մասնիկը ոչ թե, իսկապես, անալոգիայով է ստացված, այլ ինչպես ցույց է տրված իր տեղում, երկու առանձին հոգնածանցի միացումից ու հնչյունափոխությունից՝ որ >+տ>րու>տ, որ հատուկ է հայերենի ոգուն (տես այստեղ՝ § 6):

2 Սկզբի բաղաձայնի կրկնությամբ չէ, որ ստացվել է վազ-վ-ստել բայրակը, այլ սա ստացված է, ըստ իս, բայարմատի կրկնությամբ վազ-վցել, որից և ստ բաղաձրյալ մասնիկի համեմամբ՝ վազ-վց-նա-ել >վազ-վ-ռա-ել՝ արմտական ըստ հնչյունի անկումավ: Իսկ բաշ-կտ-ել և կոխ-կուտ-ել բայաձեռի մեջ՝ կատ բաղազրյալ մասնիկ է կ+ռ+տ, որտեղ կ մասնիկ է և ոչ թե արմտաի ոկզբի ևկը հնչյունի կրկնությունը: Այս կ մասնիկով ունենք և ուրիշ բայաձեռ՝ չշատիք գաղափարով, որ՝ ծեծ-ել—ծեծ-կ-ել, ծեծ+կ+ռ+տ-ել. շաբշաբել—շաբշր-կ-ել, փիթ-ել—փիթ-կ-ել, բոլոբ-ել—բոլը-կ-ել, չե-իլ—չե-կ-իլ... և այլն (տես այստեղ՝ § 9):

3 Խոծ-վ+ռ+տ-ել, կանչ-վ+ռ+տ-ել բայաձեռն էլ ոչ թե վազ-վ+ռ+տ-ել՝ բայի անալոգիայով են կազմված, այլ այդ բայաձեռի մեջ ոչ ածանցը, իմ կարծիքով, գալիս է անունների վ<վը || ուը <ուի երկակի թվի մասնիկեց և միանում է մյուս (ռ+տ) բազապրյալ հագնակի մասնիկին նաև բաղրվելով (տես այստեղ՝ § 8):

դում ենք. «Կրկնավոր բայերի հիմնական ֆունկցիան (բաղմակիությունը) ուժեղացնելու կամ երկարացնելու համար մեր հայոց բարբառները զիմում են նաև «տեականացնող» -օր (կամ -օտ) ածանցի օգնության, ինչպես նաև ուժեղացում արվում է թվի (հոգնակիի) տեսակետից: Օրինակ՝ պաշտիկի՝ պաշտչորելիսաբել՝ խարիսքել՝ խարիսքորել, ափլիքել՝ ափլիքորել (ափ օձեռքի թաթ՝ բառից), բնդել՝ բնդմնդել (բնդբնդորել), որի համար կա և բնդորել կամ բնձորել (ուր ելք ներածանցը փոխարինում է կրկնության փունկցիան). խլել՝ խլխլել՝ խլխլունել (սոսմասնիկով), լմել՝ լմլմել՝ լմլմորել. ծամել՝ ծամծմել՝ ծամծմորել, դաղել՝ դաղդղել՝ դաղդղորել, չափել՝ չափչփել՝ չափչփորել, բշտել՝ բշտբշտորել զմմտ. նաև ճմռել՝ ճմռտել ճմռտորել (երկու ուժեղացնող ածանցներով և-որ, և-որու), ճվճորիկ, բղբղորիկ և այլն նառնել բայից ունենք խտանշտել (<խառն-ընջտել¹), որը ուժեղացվում է և-որ տեականացնող մասնիկով և ստացվում է խտանշտորել, այսպես և լպատել (լպս-տել) և լպատորել կարծես թե բայի կըրկնությունը² տալիս է բազմապատկական կերպը (iterativum), իսկ -օր (կամ -օտ, -օտ) ածանցներով այդ ֆունկցիան տեականացվում (durativum) կամ թերեւ ուժեղացվում է (intensivum) և այլն, և այլն: [Այս բոլոր գիրքերում, ինչպես տեսնում ենք, բոլորն էլ այս կամ այն չափով, խոսելով բայածանցների արտահայտած կրկնողության գաղափարի մասին՝ ոչ ոք չի տալիս նրանց ստուգաբանությունը]:

§ 12 Ամփօփամ. Ինչպես իմ այս հետազոտությունից է պարզվում, ընդհանրապես հայերենի անունների հետ, այս կամ այն չափով, հանդես եկող հոգնակի կամ երբեմնի հավաքական մասնիկները՝ -ատ-ի, -ոտ-ի, -տ-ի, -որ-այ, -վ-ի, -ք-իկ, -ն-ի, -ան-ի, -եան և այլն, ինչ ծագումով էլ սրանք լինեն, միառժամանակ գտնում ենք նաև բայերի մեջ: Այս մասնիկները անուններից փոխանցվելով և ենթարկվելով որոշ հնչյունափախության՝ բայաձեների մեջ ստացել են հետեյալ ձեռագորումը՝ -ատ, -ոտ, -տ, -որ || -ի || -ո || -վ || -ք || -իկ, -ն, -ան > - ն, -եան

¹ Խառնշտել բայի նման տարբորոշումը (<^Յխառն-ընջտել>), իմ կոք-ծիքով, ձիշտ չէ: այս բայը կազմված է խառն բառից և -շ+տ<^Յ-ր+ա բաղադրյալ ածանցից, որով մի շաբթ բայաձենել ունենք (աես այստեղ՝ § 6):

և այնու Սրբանց սկզբնական նշանակությունն ու պաշտոնը, ինչպես դեռ այսօր էլ պահպանված է հայերենի անուններում ընդհանրապես, հիմնականում եղել է հոգնակի կամ շատի գաղափարն արտահայտելը, որի երանգավորութիւնը են գործող անձի կամ կրող խնդրի շատը, մեջից ավելին ցույց տալը բայսակերի մեջ, ապա՝ գործողության առհասարակ կրկնությունը կամ կրող խնդրի շատ մասներում այդ սույն գործողության կատարվելը, այլև՝ նրա՝ գործողության անականությունը, ինտենսիվությունը կամ սաստկությունը և այնու

Այսպիսով բայածանցները ցույց են տալիս բայով արտահայտված գործողության կերպերը՝ ենթակայի գործողության և նրա (ենթակայի) ու խնդրի փոխգործողության իմաստային տարբեր երանցները բայածեների մեջ:

Առարկայի գաղափարից՝ այդ առարկայի հետ կապված գործողության գաղափարի դարձացումը, որի պատճառով էլ կատարվել է նոր բառերի՝ բայերի ձևավորումը, կապված է անունների հոգնակի մասնիկներից բայական ածանցների առաջացման պրոցեսի հետ։ Բայածանցները սկզբնական շրջանում, անունների հոգնակի մասնիկների նման, ընականաբար արտահայտել են շատի գաղափար, որ մինչև օրս էլ այս կամ այն չափով, կարելի է տեսնել մի շաբք բայածներում։ Սրբանք ավելի կենսունակ և երբեմնի լեզվական մտածողության վերապրուկները դրսեորող տարբեր բայածեներ են։ Լեզվական այդ վերապրուկները գերազանցապես կապված են ժողովրդական մտածողության և ժողովրդը. լեզուների կամ բարբառների հետ, մանավանդ արևմտյան ճյուղի բարբառների հետ։ Այդ է պատճառը, որ, ինչպես իմ բերած օրինակներից էլ կարելի է տեսնել հայաքական մտածողության վերապրուկներով հարուստ են մեծ մասամբ բարբառային բայածները։ Խակ որքան անցնում ենք գրական ձևերի, այնքան այդ բայածանցները չեն երևում, երեալիս էլ՝ կամ քարացած են կամ էլ իմաստի տարբեր երանգավորում ստացած։

Հոգնածանցների առաջ բերած իմաստի երանգավորութիւնը հաճախ այնքան բաղմազան են ու զգալիորեն իրարից տարբեր որոշ բառածներում, որ զբանք հեշտությամբ կարող ենք նոր բառերի տեղ ընդունել [ինչպ. օր.՝ «բոլոր» բառից՝ բոլոր-ել, բոլոր-է, բոլոր-տ, բոլոր-տ+կ-ել, «բեկ» արմատից՝ բեկ-ել, բեկ-որ, բեկ-տ-ել, բեկ-տ+որ, բեկ-չ-ել, «կծ» արմատից՝ կծ-ել կրծ-ել, «ցայտ» արմատից՝ ցայտ-ել, ցատ-կ-ել, ցատ-կ+տ-ել, «գիլ»

բառարմատից՝ դլեւ, գլոր-ել. «տակ» բառից՝ տակ-ը, տակ-ան+ք... և այն]: Այսպիսով մեզ հետաքրքրող հոգնածանցները, բացի հոգնակերտական մասնիկներ լինելուց, միառժամանակ բառաստեղծական մասնիկներ են հայերենում:

Այն երևութը, որ հոգնածանցները հանդես են դալիս բայց ձեւը միայն հատուկ չէ հայերենին. նման բան կարելի է տեսնել նաև ուրիշ լեզուներում, հարեան լեզուներից, օր., վրացերենում և այլն:

Անուններին բարդվող հոգնակի մասնիկների նման, բայց կան այդ նույն ածանցներն էլ, ինարկե, որոշ փոփոխությամբ, միանում են բային՝ նույնպես վերջից, այսինքն՝ բայարմատին կամ բայաբնին, որպես անվան, և ապա բաղադրվում են բայավերջավորությունները, այն է՝ գեմքի ու թվի («եմ, -ամ) կամ գերբայտիան («ում, -ել, -ած, -ելու) վերջավորությունները [այստեղ հաջվի չենք առնում որոշ ածանցների բայարմատների մեջ հանդես գալը չսորհիվ դրափոխության, ինչպես այդ ցույց է տրված իր տեղում]:

Բայաձեւերի մեջ քերականական կարգերի այս տեսակ հերթականությունը, այսինքն՝ նախ բայարմատ կամ բայաբունը, այսուհետեւ հոգնածանցը և ապա զուտ բայավերջավորությունները, մեզ հնթադրել է տալիս այն մասին, որ միևնույն բառաձեւով՝ հոգնածանցներով հանդերձ սկզբում արտահայտվել են ընդհանրապես կոնկրետ հոգնակի գաղափարների հետ միասին նաև, այսպես ասած, բառագործողություններ՝ գելուս բայավերջավորությունները չստացած: Դիցուք, թե եղել է *ծակոտի բառաձեւը, թե որպես բառանուն, այսինքն՝ շատ, մեկից ավելի ծակեր ցույց տվող և թե որպես բառագործողություն՝ շատ ծակեր բանալու գաղափար արտահայտող. հետագայում այդ *ծակոտի բառաձեւը բայական վերջավորությունը ստանալով և ձեռվ էլ տարբերվելով առաջինից՝ բառանունից՝ ընդունել է արդեն այսօրվա բայի ձևը՝ *ծակոտի+եմ<ծակոտեմ շատ ծակեր բանամ» և այլն:

Հայերենի հոգնածանցները ինչպես անունների, այնպես էլ բայաձեւերի մեջ շատ հաճախ առանձին-առանձին հանդես չեն գալիս, այլ սովորաբար, ինչպես իր տեղում տեսանք, միանում են իրար՝ երկու, երեք և դեռ ավելի ածանցներ՝ միայն մի հոգնակի գաղափար արտահայտելու համար [գործող անձի կամ կրողինդրի շատը՝ մեկից ավելին լինելը, գործողության ընդհանրա-

տիս կրկնությանը կամ կրող խնդրի շատ մասերում կատարվելը, այլև նրա՝ գործողության տևականությունը, ինտենսիվությունը... և այլն։ Այդ միացությունները հետեւյալ հաջորդականությամբ ու քանակով են կատարվում, օր՝՝ որ>ր+տ>րտ>րտ || շտ. տ+որ>տոր>տր. տ+որ+տ>տորտ>տրտ>տոտ. տ+որ+տ+որ>տորտ>տրտոր. տ+որ+տակ>տրտկ. տ+որ+իկ>տորկ>տրկ. իկ+տ>կոտ>կտ. ք+նի+ոտ>նեռտ>նետ. նի+իկ+տ>նկտ. վի+ն+ք+տ>վիտ... և այլն, և այլն։

Ի՞նչով է բացատրվում հիշյալ ածանցների այս չափի միացություններն ու կուտակությունները, արդյոք ժամանակի ընթացքում մի ածանցի իմաստի մթագնումով և մյուսի փոխարինումով՝ ավելացման կարգով, թե՛ զրանք սկզբում տարրեր լեզուների և ապա բարբառների խաչավորման յուրահատուկ ներդրություններն ու գանձերն են բայաձևերի մեջ՝ անուններից անցած, որ ստացվել են վերջին հաշվով որպես կուտակություններ։ Այս երկու ճանապարհով էլ, հավանական է, կարող էին այդպիսի կուտակություններ, երբեմն նույնիսկ շատ զգալի, անձանաչելի գարձած, խճողություն ու այլակերպություններ ստացվել, հաճախ յուրահատուկ կերպով հնչյունափոխվելով և իմաստի տարրեր երանգավորություններ ստանալով։

Ինչպես պարզվում է, ընդհանրապես անունների և բայի մեջ անխղելի կապ կա ոչ միայն շարահյուսական, որ մեր քննությունից գուրս է, այլև իմաստաձևաբանական, որն, ինչպես տեսանք, հանդես է գտլիս հատկապես քեր. կարդերի որոշ ընդհանրության մեջ, մասնավորապես հոգնածանցների կիրառությունների ընդհանրության մեջ։ Այլ կերպ ասած անունների քեր. կարդերը՝ անշուշտ ձեւ-իմաստային որոշ երանգավորություններով՝ շատ հաճախ արտահայտված են բայի մեջ։ Այս իսկ պատճառով վերջինիս՝ բայի՝ քեր. կարգեցն, անկասկած, ավելի քան բարդ են ու բազմազան։ Նրա մեջ, այս կամ այն չափով, երկում են ինչպես առհասարակ անունների, այնպես էլ մասնավորապես հենց իրեն, զուտ բայի կարգերը։

А. Мурвалаи

АРМЯНСКИЕ ГЛАГОЛЬНЫЕ СУФФИКСЫ

Р е з ю м е

Как выясняется из этой статьи, именные множественные суффиксы в армянском языке: *-штի*, *-пти*, *-տի*, *-որ* (*այ*), *-վի*, *-ք*, *-իկ*, *-նի*, *-անի*, *-ենի* и т. д. когда-то переходили в глагольные формы с некоторыми изменениями, и таким образом из этих именных множественных суффиксов в настоящее время, в глагольных формах сохранились следующие суффиксы: *-տի*, *-պի*, *-տ*, *-որ* > *-ր* || *-ռ* || *-ց* || *-վ*, *-վի*, *-ք*, *-իկ*, *-նի*, *-անի* (> *ն*), *-ենի* и т. д. Первичное значение и роль этих суффиксов, в основном, это выражение понятия множества, т. е. множество действующего лица или объекта, повторение действия вообще, или на разные части прямого объекта, длительность и интенсивность действия и т. д.

Развитие понятия действия от понятия имён (= предметов) связано с процессом происхождения глагольных суффиксов, произошедших от именных суффиксов. Именно такие глагольные суффиксы сперва, подобно именным множественным суффиксам, естественно, выражали понятие множества, которое и до сего времени сохранено в некоторых глагольных формах.

Нюансы значения суффиксов множественности сегодня на столько разнообразны и различны, что мы легко можем принять такие формы в качестве новых слов. Таким образом суффиксы множественности выражают как первичное множественное, так и вторичное словотворческое значение.

Переход именных суффиксов (особенно множественных) в глагольные формы характерен не только для ар-

мянского, но и для других местных языков (грузинского, сванского, абхазского и т. д.).

Подобно именным множественным суффиксам, те же глагольные суффиксы часто соединяются друг с другом (по два, три, иногда и больше суффиксов) и выражают одно и то же значение множества [т. е. множество действующего лица или объекта, повторение действия вообще, или на разные части объекта (или однородных объектов) длительность и интенсивность действия и т. д.]. Соединение этих суффиксов происходит таким образом: *-pr>r+m>-riп>-ли || -զլ.-m+pr>-լոր>-որ.-m+pr+m>-ուրիլ > -ուրիլ + -ուրիլ . -m+pr+m+pr>-ուրիլոր>ուրիլոր. -m+pr+mակ>-ուրիկ. -m+pr+իկ>-ուրիկ > ուրիկ.-իկ+m>-կուլ>կուլ. -ք+նի+m>-քնուլ < քնուլ. -նի+իկ+m>-նկուլ.-վի+ն+ք+m>-վնիլ..* и т. д.

Таким образом выясняется, что между именами и глаголами существует вообще неразрывная связь, связь, не только синтаксическая, но и морфологическая. Эта связь имен и глаголов выражается однородными суффиксами, имеющими общими суффиксами множественности.